

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Յուճուար 6-ի Դէպքերուն Լսումները Կը Դառնան Հրապարակային

Այս շաբաթ կը սկսին Յուճուար 6-ի իրադարձութիւնները քննող Գոնկրեսի Յատուկ Յանձնաժողովի հրապարակային լսումները, որոնք պիտի սփռուին Ամերիկեան հեռատեսիլի կայաններէն:

Տարի մը առաջ ձեւաւորուած Յատուկ Յանձնաժողովի գլխաւոր նպատակն էր քննել 2020 թուական Յուճուար 6-ին, մայրաքաղաք Ուաշինգթոնի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները, որոնց ընթացքին նախկին նախագահ Տամուտ Թրամփի կողմնակիցները յարձակեցան Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան նստավայրերու՝ Գափիթոլի շէնքին վրայ, նպատակ ունենալով խանգարել ճիշտ Պալատին ընտրութեան հաստատումը՝ ըստ Սահմանադրութեանը նախատեսուած յատուկ կարգի: Գափիթոլի ոստիկանութեան եւ ցուցարարներուն միջեւ տեղի ունեցած բախումներուն ընթացքին ու անոնց հետեւանքով զոհուեցան եօթը հոգիներ, ձերբակալուեցան շուրջ 800 կասկածեալներ, որոնցմէ շատեր այժմ կը գտնուին բանտերու մէջ: Այս իրադարձութիւններուն գլխաւոր գոհը եղաւ Ամերիկեան ժողովրդավարութիւնը, որ ենթարկուեցաւ իր պատմութեան մեծագոյն փորձութեան: Այս դէպքերը արդիւնք էին Տանուտ Թրամփի կողմէ նախագահական ընտրութիւններուն արդիւնքներու մերժումին, հակառակ որ, երկրի բոլոր դատարանները՝ մինչեւ Գերագոյն Դատարանը մերժեցին նախկին նախագահի բոլոր առարկութիւնները:

Ներկայացուցիչներու Տան Դեմոկրատ մեծամասնութեան նախաձեռնութեամբ կազմուած քննիչ Յանձնաժողովի պարտականութիւնն է քննել ու բացայայտել Յուճուար 6-ի դէպքերուն ծալքերը ու անոնց հիման վրայ ընդունիլ նոր օրէնքները՝ ապագային նման երեւոյթներ կանխելու համար: Յանձնաժողովը նաեւ կրնայ իր եզրակացութիւնները փոխանցել Արդարադատութեան Բաժանմունքին՝ կատարուած իրաւորիչները եւ առաջին հերթին նախկին նախագահը պատասխանատուութեան կանչելու համար:

Հանրապետական ղեկավարները մերժեցին մաս կազմել Յատուկ Յանձնաժողովին, թէեւ երկու պահպանողական թեւի Հանրապետական Գոնկրեսականներ

ԵԱՀԿ-ի Կողմէ Ընդգծուած Է ԼՂ Հակամարտութիւնը Համանախագահութեան Ձեւաչափին Մէջ Կարգաւորելու Անհրաժեշտութիւնը. Արարատ Միրզոյեան

Սթոքհոլմի մէջ նախորդ տարի ԵԱՀԿ ամենամեայ նախարարական խորհրդաժողովի ընթացքին ԵԱՀԿ մասնակից պետութիւններու մեծամասնութեան, ինչպէս նաեւ շարք մը միջազգային կազմակերպութիւններու բարձրաստիճան ներկայացուցիչներուն կողմէ յատուկ ընդգծուած է ԼՂ հակամարտութիւնը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ձեւաչափով բանակցութիւններու միջոցով կարգաւորելու անհրաժեշտութիւնը, Ազգային ժողովին մէջ այս մասին յայտնեց ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Նախարարի խօսքով՝ ՀՀ արտաքին քաղաքականութեան կարեւորագոյն գերակայութիւնը շարունակած են մնալ Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան ապահովումը, ԼՂ հակամարտութեան քաղաքական կարգաւորումը՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ծիրին մէջ եւ անոր մասնաթիւնները:

2021-ի Սեպտեմբերին Նիւ



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

Եորքի, ապա Նոյեմբերին Փարիզի մէջ տեղի ունեցած է Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներուն հանդիպումները՝ ԵԱՀԿ Մինսքի համանախա-

գահութեան մասնակցութեամբ եւ միջնորդութեամբ: Հանդիպումներու ընթացքին հայկական կողմը ընդգծած է իր դիրքորոշումը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ձեւաչափով ԼՂ հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացը լիարժեքորէն վերականգնելու առնչութեամբ: Վերահաստատուած է սահմանազօտին մէջ ապամագլցողութեան եւ մարդասիրական խնդիրներու կարգաւորման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ սաղարաններու եւ հայատեաց հուշարարութեան անընդունելիութիւնը:

Մինչեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ձեւաչափով երկրորդ փարիզեան հանդիպումը, Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարները միմեանց հանդիպած են նաեւ Հոկտեմբերին Մինսքի մէջ՝ Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրովի միջնորդութեամբ:

Շար.ը էջ 5

Ընդդիմութեան Հրահրած Ձանգուածային Անկարգութիւններուն Առթիւ Յարուցուած ԵՆ Քրեական Գործեր



Երեւանի մէջ բախումներ՝ ընդդիմադիր ցուցարարներու եւ ոստիկաններուն միջեւ

Երեւանի Դեմիրճեան-Պուշեան փողոցներու խաչմերուկին վրայ Յունիս 3-ին կատարուած զանգուածային անկարգութեան դէպքին առթիւ Քննչական կոմիտէի յատուկապէս կարեւոր գործերու քննութեան վարչութեան մէջ նոյն օրը յարուցուած քրեական գործի շրջանակներուն մէջ իրականացուած են քննչական ու դատավարական անհրաժեշտ գործողութիւններ:

Ոստիկանութեան կը տեղեկացնեն թէ, արդիւնքով պարզուած է, որ հաւաքի պահին, «Դիմադրութիւն» շարժման ղեկավարներուն կազմակերպմամբ եւ ուղղորդմամբ, մասնակիցները փորձած են ճեղքել Պուշեան-Դեմիրճեան փողոցներու խաչմերուկին

զանուող ոստիկանական շղթան: Այնուհետեւ, հաւաքի մասնակիցները, չենթարկուելով հասարակական կարգի պահպանութիւն իրականացնող ոստիկաններու օրինական պահանջներուն, սկսած են զանգուածային անկարգութիւններ:

Մասնաւորապէս, քարերով, մետաղեայ ձողերով, շիշերով, ինչպէս նաեւ այլ առարկաներով հարուածներ հասցուցած են ոստիկանութեան ծառայողներուն՝ բռնութիւն գործադրելով անոնց նկատմամբ: Այդ կերպ փորձած են ճեղքել ոստիկանական շղթան՝ վտանգելով հասարակական անվտանգութիւնը:

ԱՄՆ Ստահոգութիւն Կը Յայտնէ Ատրպէյճանի Հսկողութեան Տակ Գտնուող Հայկական Մշակութային Ժառանգութեան Ապագային Նկատմամբ



ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը Յունիս 2-ին հրապարակած է «Միջազգային կրօնական ազատութեան 2021-ի զեկույցը»:

Զեկույցի «Ատրպէյճան» բաժնին մէջ ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը կը յիշատակէ Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի «Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան մարդասիրական հետեւանքներուն» վերաբերեալ բանաձեւին մէջ կառուցիչ արտայայտուած մտահոգութիւնը՝ կապուած Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ տասնեակ հայկա-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Թուրքիան Այլեւս... «Յնդկահաւ» Զէ Էրտողանը Մրցակցում Է Արաթուրքի Դետ

ԼՈՒՄԻՆԷ ՄԵԻՐԱՐԵԱՆ

ՄԱԿ-ը պաշտօնապէս հաստատել է Թուրքիայի անվանափոխութիւնը, եւ այսուհետ այդ երկիրն անվանելու կոչուելու է ոչ թէ Republic of Turkey՝ Թուրքիայի Հանրապետութիւն, այլ Republic of Turkiye, կրճատ՝ Turkiye, որը հնչում է՝ Թիւրքիյէ: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրտողանը նման փոփոխութիւնը բացատրում է հետեւեւ կերպ. «Այն լաւ է ներկայացնում եւ արտայայտում թուրք ազգի մշակոյթը, քաղաքակրթութիւնն ու արժէքները»: Թուրքիայի ԱԳ նախարար Մեւլիտ Չաուշօղլուն էլ նշել է, որ երկրի անուան ուղղափոխութեան փոփոխութիւնը նպաստելու է «միջազգային ասպարէզում երկրի հեղինակութեան բարձրացմանը», քանի որ նոր անուանումն «աւելորդ ստոյգի արտաբերումն է արաբական տարրերի «turkey»՝ թարգմանաբար՝ «հնդկահաւ» բառի հետ: Բացի այդ, ըստ «Cambridge English Dictionary»-ի, «turkey» բառը փոխաբերական իմաստով ունի չիմար, անյաջողակ, անշնորհք նշանակութիւնը: «Մենք ջանքեր կը գործադրենք 360 աստիճան ընդգրկմամբ ամրապնդելու Turkiye ապրանքանիշը, ներկայացնելու եւ ակտիւացնելու այն աշխարհում: Մենք կը ձգտենք մեր երկիրը դարձնել համաշխարհային տէրու-

թիւն եւ կլոպալ խաղացող», - դեռեւս 2021 թ. Դեկտեմբերի 27-ին յայտարարել էր Թուրքիայի նախագահի աշխատակազմի հարդրողակցութեան բաժնի ղեկավար Ֆահրեթ Թին Ալթունը: Թուրքիայի նոր անուանումը կը լինի բոլոր միջազգային փաստաթղթերում, միջազգային միջոցառումներին, այլ պետութիւններին հետ բանակցութիւններում, միջազգային գործարքների ժամանակ: Էրտողանը երկրի անուանափոխութիւնն սկսել էր 2021 թ. Դեկտեմբերին: 2022 թ. Յունուարից ապրանքներ վաճառելիս երկիրն արդէն օգտագործում է «Made in Turkiye» մակագրութիւնը: Թուրքիայի ներսում տրամադրութիւնները տարբեր են, կան ինչպէս երկրի անվան փոփոխութեանն աջակցողներ, այնպէս էլ՝ քննադատողներ, որոնք կարծում են, որ նման քայլերով էրտողանը պարզապէս զբաղեցնում է ժողովրդին՝ տնտեսական ճգնաժամից եւ ներքաղաքական խնդիրներից մինչեւ յաջորդ տարուայ ընտրութիւնները ուշադրութիւնը շեղելու նպատակով: Թուրքիայի անուանափոխութեան հարց նախկինում էլ քննարկուել է քաղաքական շրջանակներում, յատկապէս՝ էթնիկ քուրդ թուրքու Օզալի նախագահութեան ժամանակ (1989-1993 թթ.): Արսէն Եալանուզեանը «Հայ գի-

տուրի» 2013 թ. Մայիսի համարում գրում է, որ նրա համար պետութեան անուանափոխութիւնը քրտական խնդրի լուծման բանալի էր, քանի որ Թուրքիան դադարելու էր միայն «թուրքերի պետութիւն» լինելուց եւ վերածուելու էր «աշխարհագրական տարածքի», որտեղ թուրքերի հետ հաւասար իրաւունքներ էին ստանալու նաեւ միւս ժողովուրդները, նախեւառաջ՝ քանակով թուրքերին յաջորդող քրտերը, այսինքն՝ առաջարկում էր Թուրքիան դարձնել դաշնային հանրապետութիւն: Օզալը դրանով առաջին պլան էր մղում «հողի», այսինքն՝ աշխարհագրական սկզբունքը՝ ի տարբերութիւն բանթիւրքիստների «արեան ու լեզուի» սկզբունքի, ինչը հակասում է թուրքական ազգայնականութեանը, այսինքն՝ քեմալականութեան գաղափարախօսութեանը: Ուշագրաւ է, որ քրտական հարցը լուծելու նպատակով այն ժամանակ վարչապետ էրտողանը նոյնպէս ցանկութիւն է ունեցել Թուրքիայի Հանրապետութիւնը վերանուանել «Անատոլիական հանրապետութիւն»: Այդ մասին գրել էր թուրք ազգայնականների «Ենի-չաղ» թերթը 2013 թ. Ապրիլի 23-ի համարում: Սակայն ներկայումս էրտողանն իր առջեւ նպատակ է դրել ստեղծելու «համաշխարհային տէրութիւն», «գլոպալ խաղացող»,

որը կը կարողանայ հաստատել իր առաջնորդութիւնը նախեւառաջ թրքալեզու ժողովուրդների եւ պետութիւնների շրջանում: Պետութեան անուանման փոփոխութիւնը թոյլ կը տայ մշտապէս «յիշեցնել» թրքական աշխարհում ունեցած յաւակնութիւնները: Միւս կողմից՝ Թուրքիան իսլամական աշխարհում եւ առաջնորդի դերը ստանձնելու հաւակնութիւններ ունի: Սամուէլ Հանթինգթոնը «Քաղաքակրթութիւնների բախումը եւ աշխարհակարգի վերափոխումը» աշխատութեան (1996 թ.) մէջ գրել էր. «Արեւմուտքի ազդեցութիւնից՝ աշխարհիկութիւնից եւ դեմոկրատիայից լաւի եւ չարի դասեր քաղելով՝ Թուրքիան կարող է հասնել իսլամի առաջնորդ դառնալու նմանատիպ իրաւունքի: Բայց դրան հասնելու համար նրան պէտք է աւելի վճռականօրէն հրաժարուել Աթաթուրքի ժառանգութիւնից, քան Ռուսաստանը լքեց Լենինի պատուիրանները: Թերեւս, դրա համար անհրաժեշտ կը լինի Աթաթուրքի հասակով առաջնորդ, որը կը միաւորի կրօնական եւ քաղաքական ժառանգութիւնը, որպէսզի Թուրքիան քանդուած երկրից վերածի առանցքային պետութեան»: Ի դէպ, այս մասին գրուել է այն ժամանակ, երբ էրտողանը դեռեւս առաջին քայլերն էր անում քաղաքականութեան մէջ: Իհարկէ, այդ ուղղութեամբ զարգացումները, այսինքն՝ իսլամի դերակատարութեան մեծացումը տեղի կ'ունենան այնքանով, որ քանով ձեռնառու

Քաղաքական Իրադրութեան Փոփոխութիւնը Հայաստանում. Համախմբումը Լուծում Զէ

ՅԱԿՈՒ ԲԱՐԱՆԵԱՆ

Հայաստանում քաղաքական իրադրութեան փոփոխութեան, նոր քաղաքական իրողութիւնների ձեւաւորման առնչութեամբ յաճախ է հնարաւոր լսել այն, որ պէտք է համախմբուեն կարող ուժերը, առողջ քաղաքական համակարգի ձգտող քաղաքական միաւորները: Այդ «դեղատոմսը» ամենատարածուածն է բոլոր այն խօսակցութիւնների ընթացքում, երբ դժգոհութիւններ են հնչում առկայ քաղաքական բովանդակութեան, ներկայիս ընդդիմութիւնների գործունէութեան, քաղաքական դաշտի եւ համակարգի սպառնալուծութեան կամ ընդհանրապէս չկայացածութեան վերաբերելով: Այն, որ դժգոհութիւնները մեղմ ասած՝ հիմնաւոր են, թերեւս հազիւ թէ հնարաւոր լինի վիճարկել, եթէ վիճարկել արժէ ընդհանրապէս: Ամբողջ հարցն այն է, որ մոլորութիւն կամ գործնականում դատարկութիւն է նաեւ ելքերի, իրավիճակի փոփոխութեան «դեղատոմսերի» հարցում: Համախմբուելը, միաւորուելը, առողջ ուժերի կոնսոլիդացիան եւ այլն, դրանք բարի ցանկութիւններ կամ հռչակագրային, տրաֆարետային գնահատականներ են, որոնց տակ գործնականում չկայ բովանդակութիւն այնպէս, ինչպէս բովանդակութիւն չկայ ներկայիս քաղաքական ընդդիմութիւնների հռետորաբանութեան ներքոյ: Հայաստանում քաղաքական խորքային վերափոխումները պահանջում են ոչ թէ համախմբում, այլ աշխատանք՝ աշխատանք նախ եւ առաջ հենց դեղատոմսերի շուրջ: Երբ իւրաքանչիւր քաղաքական միաւոր կը ձեւաւորի իրապէս առար-

կայական դեղատոմս՝ բարի ցանկութիւններից բացի, եթէ անգամ այդ ցանկութիւնները միանգամայն անկեղծ ու անմնացող են, արդէն կը հասունանայ յաջորդ քայլը՝ առկայ դեղատոմսերի համադրումը եւ քննարկումը, հասկանալու համար, թէ ինչ է հնարաւոր ստանալ դրանց հաւաքականութիւնից, որոնք են դրանց թոյլ կամ ուժեղ կողմերը, որքան է հնարաւոր մի կողմ թողնել թոյլերն ու համադրել ուժեղները, ըստ այդմ ստանալով առաւել ուժեղ դեղատոմսեր: Բնական է, որ դեղատոմսի ուժը կախուած է լինելու նաեւ ախտորոշման ճշգրտութիւնից եւ առարկայականութիւնից, որովհետեւ մեզանում յաճախ նոյն բաժակաճառային տրամաբանութեամբ է լինում նաեւ իրադրութեան ախտորոշումը, խնդիրների պատճառահետեւանքային կապի արձանագրումը: Այդ ամբողջ աշխատանքը արդիւնաւետ լինելու համար նախ եւ առաջ պահանջում է լուծութիւն, ինչպէս ցանկացած գիտական աշխատանք: Իսկ խօսքը հենց փաստացի գիտական աշխատանքի անհրաժեշտութեան մասին է, որովհետեւ միայն այդ մակարդակի եւ տրամաբանութեան մօտեցման պայմաններում է հնարաւոր Հայաստանում հասնել առարկայական ախտորոշման եւ դեղատոմսերի, լուծումների բանաձեւերի մշակման առարկայական աստիճանի: Չփոթել իտէալականի հետ, որովհետեւ առարկայականն ու իտէալականը հոմանիշներ չեն: Պէտք է փնտռել իտէալականութիւն: Պէտք է առարկայականութիւն, որի շուրջ կը լինեն քննարկումներ, առարկութիւններ եւ հաւանութիւններ, համադրումներ եւ

ըստ այդմ՝ եղածի նոյնքան գործնական գարգացում: Հայաստանում բացակայում է քաղաքականութեան արտադրողականութեան այդ ցիկլը, որպէս հետեւանք բացակայում է նաեւ գործնական, իրական քաղաքականութիւնը, ու դաշտը լցում է համատարած բաժակաճառերով, երբ տարբերութիւնն ընդամէնը այն է, որ կան կեղծ բաժակաճառասողներ, ու անկեղծ ասողներ, եւ տարբեր է նաեւ բաժակաճառասողների հանդէպ հանրութեան վստահութիւնը եւ վերաբերմունքը: Նոյն բանն ասող մէկին կարող են համակրել, անգամ պաշտել, իսկ միւսին՝ փնտրել ու հայհոյել: Որովհետեւ, առարկան բովանդակութիւնը չէ, գաղափարը չէ, որ պահանջի համարժէք վերաբերմունք եւ գնահատարժեք: Այդպիսով, Հայաստանում քաղաքական վերափոխումներին ներուժը պէտք է չափուի դրանց վերաբերելով առաջարկների առարկայականութեամբ, կոնկրետութեամբ, գաղափարական շօշափելիութեամբ եւ այդ ամէնի շուրջ աշխատելու պատրաստակամութեամբ, որը կ'ենթադրի քաղաքական արտադրողականութեան տարբեր տրամաչափի, մասշտաբի ցիկլներ, ինչը կենթադրի որոշակի չափելի արդիւնք: Այլապէս, Հայաստանում հնարաւոր է տասնամեակներով խօսել քաղաքականութեան, վերափոխման մասին, յուսավառուել որեւէ մէկի խօսքով, յետոյ յուսայատուել, հիասթափուել, յետոյ դարձնել ոգեւորուել, ու այդպէս շարունակ՝ քաղաքական արտադրողականութեան ցիկլի փոխարէն ստանալով անվերջանալի փակ ցիկլեր: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Շար.ը էջ 6

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐՇ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Ոստիկանության Գործողութիւնները Կը Գնահատեն Խիստ Ժողովրդավարական»
Նախարար Անահիտ Աւանեսեան

«Ես ոստիկանութեան գործողութիւնները գնահատում եմ խիստ ժողովրդավարական: Եւ ինձ համար անհասկանալի է կառավարութեան շէնք մուտք գործելու այդ մղումները եւ ոչ-օրինաչափ գործողութիւնները», ըսաւ առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեանը՝ անդրադառնալով ընդդիմութեան գործողութիւններուն:

«Մենք օրէնքի գերակայութեան սկզբունքին պէտք է հետեւենք, եւ ցանկացած անձ, ով իրականացնում է ոչ-իրաւաչափ գործունէութիւն, ուրեմն պէտք է պատրաստ լինի, որ նրա նկատմամբ պէտք է համաչափ պատասխանատուութեան ու զսպման միջոցներ կիրառուեն», յաւելեց ան:

Անահիտ Աւանեսեանը նշեց, որ անհասկանալի է, թէ ինչո՞ւ ընդդիմադիրները կ'ուզեն մուտք գործելով նախարարութեան շէնքէր՝ հանդիպել իր ու միւս նախարարներուն հետ: «Կառավարութեան անդամները բոլորը օրէնքի շրջանակներում ժամանակ առ ժամանակ պարտաւոր են գալ եւ հանդիպել պատգամաւորներին: Եւ ուրախ կը լինէինք, եթէ նրանք լինէին կառավարութեան հետ հարց ու պատասխանի ժամանակ, մեզ շատ սուր հարցեր տային: Բայց, ցաւօք սրտի, վերջերս ակնատես ենք, որ դահլի-



Առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեան

ճը միշտ դատարկ է: Եւ ինձ հասկանալի չէ, թէ հնարաւորութիւն ունենալով ինձ հանդիպել այստեղ՝ իրենց ինչի՞ն է պէտք հանդիպումը: Ինձ համար տարակուսելի է, որ մեր ընդդիմադիրները չեն օգտագործում իրենց հարթակը, որի համար լիազօրուած են, ընտրուած են, եւ չեն գալիս, հարցեր չեն տալիս, մեզ ուղղուած քննադատութիւն չեն հնչեցնում: Ես նրանց պահանջին ծանօթ էլ չեմ, մինչեւ հիմա չեմ հասկացել՝ ո՞րն է պահանջը», նշեց նախարարը:

Քոչարեանի ժամանակ Կը Ծեծէին, Կը Կրակէին Մարդոց Վրայ. Նորիկեան

«Խորհրդարանական ընդդիմութիւնը յայտնուել է փակուղու առջեւ եւ այս փակուղուց դուրս գալու ելքեր է որոնում՝ փորձելով տպաւորութիւն ստեղծել, որ վերջին 1-1,5 ամիսների ընթացքում հրապարակում օրակարգ է ձեւաւորում, որն այդպէս էլ չի ստանում հանրութեան աջակցութիւն: Իսկ ո՞րն է այդ օրակարգը: Վերջին երկու տարում՝ 2020 թուականի աղէտալի պատերազմից յետոյ, նոյն մարդիկ, նոյն դէմքերը տարբեր հարթակներում փորձում են նոյն օրակարգը առաջացնել, սակայն ակնյայտ է, որ հանրութիւնն իրենց այդ վստահութեան մասնատիւն չի տալիս, որպէսզի իրենք կարողանան հեռացնել գործող իշխանութեանը եւ ձեւաւորել նոր իշխանութիւն», ըսաւ «Արդար Հայաստան» կուսակցութեան նախագահ, փաստաբան Նորայր Նորիկեանը:

Ան նշեց, որ իրեն աւելի շատ կը հետաքրքրէ, թէ այս իրավիճակին մասին ինչ կը մտածէ իշխանութիւնը:

«Իմ մօտ այնպիսի տպաւորութիւն է, որ իշխանութիւնը ժողովրդավարութիւնը շփոթում է ամենաթողութեան հետ, խորհրդարանական ընդդիմութիւնը՝ սանձարձակութեան հետ: Այսինքն՝ եթէ մենք ժողովրդավարութեան ընկալում ունենք միջազգային հանրութեան կողմից, դա չի նշանակում, որ մեր երկրում ով ինչ ուզենայ՝ պէտք է անի, եւ իշխանութիւնը յայտնուի անգործութեան մէջ», ըսաւ Նորայր Նորիկեանը:

Խօսելով նաեւ այն մասին, որ յանցաւոր արարքներ կատարելու մէջ մեղադրուող անձեր ընդդի-



«Արդար Հայաստան» կուսակցութեան նախագահ, փաստաբան Նորայր Նորիկեան

մութիւնը կը համարէ քաղաքական բանտարկեալ, Նորայր Նորիկեան ըսաւ, որ այս տարիներու ընթացքին արժէքները այնպէս ինքաթիւրուեցան, որ ամէն մէկը իր խուլիկանական պահանջներին համար իրեն կը բնորոշէ, որպէս քաղաքական հայեացքներու համար հալածուող անձ:

«Մեր երիտասարդ սերունդը շատ դէպքերում ծանօթ չէ իրենց կառավարման շրջանի մեթոտներին: Ռուպերթ Քոչարեանի կառավարման ժամանակահատուածում ուղղակի կրակում էին մարդկանց վրայ, հազարաւոր մարդկանց հետապնդում էին, ստիպում էին լքել ՀՀ-ն, խօսելու համար ամենաբիրտ, խուլիկանական միջոցներով բռնութիւն էին կիրառում: Ռուպերթ Քոչարեանի կառավարման ժամանակ գորավարներին դաշնների տակ ծեծում էին», ըսաւ Նորայր Նորիկեանը:

Որոշ Հեռուստաալիքներ, Եթէ Կ'ուզեն Ցոյցերու Քարոզչական Գործիք Ըլլալ, Թող «Եուրուպեան» Ալիք Բանան Ու Այդ Ընեն. ՀՌՀ Նախագահ

Հեռուստատեսութեան եւ Ռատիոյի յանձնաժողովի (ՀՌՀ) նախագահ Տիգրան Յակոբեան, անդրադառնալով օրեր առաջ Ֆէյսպուքի կատարած իր գրառման, որուն համաձայն՝ երկու հեռուստաալիք ջանք ու եռանդ չի խնայեր՝ արտօնագրէ գրկուելու համար, ըսաւ որ չի պատրաստուիր այդ հեռուստաալիքներուն անունները հրապարակու ըսելու, քանի որ երկուքն ալ արդէն նախազգուշացուած են, եւ վարչական վարոյթներ յարուցուած են:

«Նախազգուշացուել են այն հեռարձակողները, որոնք սկսել են կոպտորէն խախտել բարոյականութեան կարգերը. եթերում թոյլ են տալիս սեռային հայհոյանք, ջարդում են հաղորդացանց, այսինքն՝ ի սկզբանէ յտակ նշուած ծրագիրը, որը ենթադրում է եթերից որոշակի ժամ յատկացնել մանկական հաղորդաւարներին, որոշը՝ ժամանցայինին եւ քաղաքականին եւ այլն», պարզաբանեց Յակոբեանը:

Հարցին, թէ արդե՞ք արդարացուած է երկրին մէջ ներքաղաքական այս լարուածութեան եւ շուրջօրեայ ցոյցերու լոյսին տակ պահանջել հեռուստաալիքներութեան որեւէ ձեւով չհղուելի ծրագրային բովանդակութեան, Յակոբեան ասաց, որ Տեսալսողական լրատուութեան մասին օրէնքը անոր համար է, որ, անկախ իրավիճակէն, հեռուստաալիքներութիւնը միայն անով չի սահմանափակուիր:



ՀՌՀ Նախագահ Տիգրան Յակոբեան


«Հանրայինում գործող հեռուստաալիքներութիւնները պարտաւոր են լուսաբանել ամբողջ Հայաստանում կատարուող իրադարձութիւններն ու անցուդարձը, նրանք հաւաքների քարոզչական գործիք չեն: Եթէ ուզում են այդպէս լինել, հանգիստ կարող են արտօնագրից հրաժարուել ու եութութեան ալիք բացելով՝ իրենց ուզածն անել», նկատեց ՀՌՀ նախագահը:

Յակոբեանը նաեւ շեշտեց, որ ինք որեւէ հեռուստաալիքներութեան անուն չէ տուած, սակայն եթէ որոշ հեռուստաալիքներութիւններ այդ վերագրած են իրենց, ուրեմն զգացած են, որ նմանատիպ խախտումներով իրենք կ'աշխատին:

Դատախազութիւնը Պահանջած Է Գործարար Մայրապետեանէն Բռնագանձել Աւելի Քան 10 Միլիոն Տոլար

ՀՀ Դատախազութիւնը դատարանէն պահանջած է գործարար Սամուէլ Մայրապետեանէն եւ «Գլոբուս» ընկերութեան տնօրէն Գ. Յակոբջանեանէն, համապարտութեան կարգով, յօգուտ պետական պիւտձէին բռնագանձել 5 միլիոն 678 միլիոն 764 հազար 260 դրամ (աւելի քան 10 միլիոն Տոլար):

Դատախազութիւնը կը նշէ, որ քննութեամբ հիմնաւորուած է՝ 2002-ի Մայիս 16-էն Յակոբջանեանը Մայրապետեանի առաջարկով ստանձնած է փաստացի վերջինիս պատկանող «Գլոբուս» ընկերութեան տնօրէնի պաշտօնը: 2004-ին «Գլոբուս»-ը պայմանագիր կնքած է այլ ընկերութեան հետ, որու հիմքով վերջինիս իրականացուցած շինարարական աշխատանքներուն հետեւանքով Երեւան քաղաքի Տէրեան 66 հասցեով 2006-ին կառուցուած է ընդհանուր 28650,63 քմ մակերեսով բնակելի շէնք: Ապա Յակոբջանեանի միջոցով կազմակերպած է «Գլոբուս»-ին պատկանող՝ նշուած բնակելի շէնքի 141 միաւոր անշարժ գոյքերը ընկերութեան կողմէ առուվաճառքի պայմանագրերու մէջ կեղծ՝ շուկայական արժէքներէն հակասօրէն ցած գիններ նշելու գործընթացը, որուն հետեւանքով Յակոբջանեանը «Գլոբուս» ընկերութեան փաստացի եկամուտը չէ ներառած հարկային մարմինին ներկայացուած հաշուարկներուն մէջ՝ այդ կերպ պետական պիւտձէ չէ վճարուած առանձնապէս մեծ չափերով՝ ընդհանուր 5 միլիոն 678 միլիոն 764



Գործարար Սամուէլ Մայրապետեան

հազար 260 դրամի հարկ: Սամուէլ Մայրապետեանը գործունէութիւն կը ծաւալէ շինարարութեան ոլորտին մէջ, «Թոյոթա Երեւան» ընկերութեան նախագահն է, անոր կը պատկանի «Հ2» հեռուստաալիքներութիւնը: Հանրութեան լայն շրջանակներուն ան յայտնի դարձաւ Հայաստանի երկրորդ նախագահ Ռուպերթ Քոչարեանի օրօք՝ մայրաքաղաքին յայտնի Հիւսիսային պողոտայի կառուցման ժամանակ, երբ տարածքներ ձեռք բերաւ այդտեղ: Մայրապետեանը կը մեղադրուի բազմաթիւ այլ ապօրինութիւններու եւ փտածութեան օժանդակելու համար,

Մեղադրանքը լսելէ յետոյ ան հեռացած էր Հայաստանէն, եւ մինչ այժմ կը գտնուի հետախուզման մէջ:

ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը Փոփոխութիւններ Կը Նախատեսէ Բանակէն Ներս

ՀՀ կառավարութիւնը փոփոխութիւններ կը նախատեսէ բանակին մէջ, որոնց հետեւանքով գլխաւոր շտաբի պետը պիտի ենթարկուի պաշտպանութեան նախարարին: Այս մասին Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին ըսած է պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը:



Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան

«Մենք ունենալու ենք նոր մոտեցում, որով գլխաւոր շտաբի պետը լինելու է պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալը: Զինուած ուժերը զբաղուելու են միայն երկրի պաշտպանութեամբ, մարտական պատրաստութեամբ: Այսպիսին՝ այն գործով, ինչով պիտի զբաղուի», ըսած է Պապիկեանը:

Հայաստանի Սահմանադրութեամբ Զինուած Ուժերու զինուորական ամենաբարձր պաշտօնեան գլխաւոր շտաբի պետն է, արդեօք առաջարկուող փոփոխութիւնը կարող է հակասութիւն առաջացնել Սահմանադրութեան հետ: Այս հարցումին՝ Արդարադատութեան Նախարարութեան պատասխանեցին, որ որեւէ հակասութիւն չեն տեսներ:

մամբ: Մինչդեռ գործող օրէնքին համաձայն, Զինուած Ուժերու գլխաւոր շտաբը կը կազմակերպէ «զինուած ուժերի օպերատիւ, տեխնիկական եւ թիկունքային ապահովումը»:

Պապիկեանը հակադարձած է ընդդիմախօսներու այն պնդումներուն, թէ բանակին մէջ պատերազմէն յետոյ ակնկալուող փոփոխութիւնները այդպէս ալ տեղի չեն ունենար՝ ըսելով, թէ ընդդիմախօսները բոլորէն լաւ գիտեն, որ ամէն ինչի մասին չէ, որ կրնան բարձրաձայն խօսիլ, այդ շարքին՝ զէնքի ձեռք բերման առնչուող հարցեով: «Գաղտնի ընթացակարգով կատարուող գործողութիւններ են: Իրենք յատուկ են դրա մասին խօսում: Կան հոլովոյթներ, կան բանակցութիւններ, դրանց մասին խօսել չի կարելի ընդհանրապէս: Դրա մասին է խօսքը: Խօսքը ֆիզիքապէս զէնք-զինամթերքը միայն Հայաստանի Հանրապետութիւն տեղափոխման մասին չէ: Կայ ծրագրաւորում, կայ ընթացք, կան պայմանագրեր»:

Պատերազմէն յետոյ յառաջացած նոր սահմանները կահաւորելու, առաջնագիծ հասնող ճանապարհներու կառուցման ուղղութեամբ հսկայական աշխատանք կը տարուի, վստահեցուցած է նախարարը:

Թէեւ հայ-ատրպէյճանական սահմաններուն պարբէաբար լարուած իրավիճակներ կ'ըլլան, այնուամենայնիւ, ըստ պաշտպանութեան նախարարին, պատերազմի վտանգ այս փուլին տեսանելի չէ:

Սահմանային Ցանկացած Լարում Բացասաբար Է Ազդում Բանակցութիւնների Վրայ. Գրիգորեան

«Սահմանային ցանկացած լարում բացասաբար է ազդում բանակցութիւնների վրայ», յայտնեց Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը՝ խօսելով հայ-ատրպէյճանական սահմանին վերջին միջադէպին մասին, երբ Սիւնիքի մէջ սպանուեցաւ շարքային զինուոր Դաւիթ Վարդանեանը:


«Բնականաբար, ցանկացած լարում սահմանին բացասական է ազդում բոլոր գործընթացների վրայ, եւ դա նաեւ պատճառ է եղել, որ մենք դեռեւս սահմանազատման եւ սահմանագծման գործընթացները սկսելուց առաջ առաջարկում էինք, որ հայելային տարբերակով գործերը ետ քաշուեն, որպէսզի սահմանին կայունութիւն լինի: Ի դէպ, սահմանային անվտանգութիւնը շարունակուած է մնալ օրակարգում, մենք կը քննարկենք եւ



Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

յոյս ունենք լուծումներ կը գտնենք, որպէսզի սահմանին լարումներ չլինեն», ըսաւ Գրիգորեանը:

Փաշինեան Ու ՀԱՊԿ Պատուիրակներու Ղեկավարները Միտքեր Փոխանակած Են ԼՂ Հակամարտութեան Լուծման Շուրջ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը հիւրընկալէ ՀԱՊԿ խորհրդարանական վեհաժողովի Գիստին մասնակիցները

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հիւրընկալեց Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) խորհրդարանական վեհաժողովի խորհուրդի նիստին մասնակիցները՝ ՀԱՊԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ, Ռուսիոյ Դաշնութեան Դաշնային Ժողովի Պետական Տուժայի նախագահ Վեաչեսլաւ Վոլոտինի գլխաւորութեամբ: Հանդիպման մասնակցած են նաեւ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը եւ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Սթանիսլաւ Չասը:

Ողջունելով հանդիպման մասնակիցները՝ վարչապետը նշած է, որ այս տարի կը նշուի ՀԱՊԿ ստեղծման 30-ամեակը, ինչ որկարեւոր իրադարձութիւն է:

«Բազմիցս ենք նշել, որ սալաւ հնարաւորութիւն է ի մի բերելու արդիւնքները, վերլուծելու մեր ձեռքբերումները, բացթողումները, քայլերը, թէ ինչով եւ ինչպէս կարող ենք աւելի արդիւնաւէտ դարձնել մեր կազմակերպութիւնը: Այս ծիրին մէջ, ի հարկէ, խորհրդարանական վեհաժողովի խորհուրդի դերը հնարաւոր չէ գերազանահատել, քանի որ ՀԱՊԿ-ը փաստացի այն քաղաքական հարթակն է, որտեղ բոլոր այս հարցերը պէտք է քննարկուեն:

Կարծում եմ՝ խորհրդարանական ձեւաչափը ստեղծում է դրա համար առաւել լայն հնարաւորութիւններ: Վերջին անգամ մենք այս

ձեւաչափով հանդիպել ենք 2019 թուականին, դրանից յետոյ տեղի են ունեցել շատ մեծ փոփոխութիւններ աշխարհում՝ Քովիտի հետ կապուած, բացի այդ իրավիճակը մեր տարածաշրջանում եւ ընդհանրապէս աշխարհում բաւականին լարուած է: Կարծում եմ՝ սալաւ կարեւոր հարթակ է, որպէսզի կիսուենք ապագայի մեր տեսլականով եւ փորձենք ՀԱՊԿ մեխանիզմները դարձնել առաւել արդիւնաւէտ՝ ճգնաժամային իրավիճակներին արձագանգելու համար:

Այնուհետեւ հանդիպման ընթացքին միտքեր փոխանակուած են ՀԱՊԿ մեխանիզմներու գարագացման, Հարաւային Կովկասի մէջ ստեղծուած իրավիճակին, ԵԱՀԿ Մինսքի խումբի շրջանակին մէջ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ:

Նիկոլ Փաշինեան անդրադարձած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ձեւաւորուած սահմանագատման եւ սահմանային անվտանգութեան յանձնաժողովի գործունէութեան, տարածաշրջանային ենթակառուցումները քննարկելու ապաշրջափակման, Ատրպէյճանի մէջ մինչ օրս պահուող հայ ռազմագերիներու, պատանդներու եւ այլ քաղաքացիական անձերու վերադարձին ուղղութեամբ իրականացուող քայլերուն: Վերջինիս հետ կապուած՝ վարչապետը կարեւորած է միջազգային հանրութեան աջակցութիւնը:

Ընդդիմութեան Հրահրած Զանգուածային Շարունակուած Էջ 1-Էն

Զանգուածային անկարգութեան մասնակիցներուն գործողութիւնները կասեցուած եւ խափանուած են: Այդ ընթացքին ոստիկանութեան չորս տասնեակէ աւելի ծառայողներ ստացած են մարմնական վնասուածքներ:

Տուժածներուն մէկ մասը բուժում կը ստանան: Դէպքին վայրը

զննութեամբ յայտնաբերուած են բազմաթիւ քարեր, մետաղեայ եւ փայտեայ ձողեր, ապակեայ եւ փրատթիքէ շիշեր, ոստիկանական համազգեստի պատուած կտորներ, պոկուած ուսադիրներ եւ այլ իրեր ու առարկաներ:

Յարուցուած քրէական գործի ծիրին մէջ, Յունիս 4-ի ժամը 16-ի դրութեամբ, 13 անձ ձերբակալուած է:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 Massis2@earthlink.net (626) 797-7680
 www.massispost.com

Մոնթեվիդեոյի Մեջ Ցուցադրուեցաւ Յեղասպանութեան Եւ Արցախի Մասին Ուրուկուէյցի Բեմադրիչին Ֆիլմը



Ուրուկուէյցի բեմադրիչ Ֆե-տերիքօ Լեմոսի «Մենք ենք մեր սարերը» փաստավաւերագրական ֆիլմի ներկայացումը տեղի ունեցաւ Ազգային հանդիսասրահի գլխավոր դահլիճին մէջ՝ մեծաթիւ հանդիսատեսի ներկայութեամբ:

Ֆիլմը նուիրուած է Հայոց Յեղասպանութեան՝ Հարաւային Ամերիկայի մէջ ունեցած հետեւանքներուն եւ Արցախի հակամարտութեան: Նկարահանումներ իրականացուած են գրեթէ բոլոր ցամաքամասներուն մէջ, այդ շարքին՝ Արցախի առաջնագիծի հայկական կողմին մէջ:

Հանդիսութեան ընթացքին,

որուն ներկայ էին Ուրուկուէյցի կառավարութեան եւ խորհրդարանի անդամներ, Արցախի նախագահի խորհրդական Ազատուհի Սիմոնեան ֆիլմի հեղինակին յանձնած է Արցախի պետական նախարարին յուշամետալը՝ գնահատելով կատարուած աշխատանքը:

Կայ տեղեկութիւն, որ Ատրպէյճանի ղեկավարատունը խնդրած է Ուրուկուէյցի իշխանութիւններէն մերժել ֆիլմի ներկայացումը պետական նշուած սրահին մէջ, սակայն պատասխան ստացուած է, որ ձեռնարկը իրականացուած է՝ յարգելով մասնաւոր իրաւունքի կանոնները:

Հայաստանի Առաջին Արբանեակը Կապ Հաստատած է Երկրին Հետ

Սպանական SATLANTIS ընկերութիւնը յայտարարութիւն տարածած է առաջին հայկական արբանեակը՝ «Ուրտանեթա»-ն Տիեզերք ուղարկելու վերաբերեալ՝ նշելով, որ իրենք հպարտ են համագործակցելու Հայաստանի հետ:

Ընկերութեան տնօրէն Ժան-Ժազ Տորէյնը մասնաւորապէս նշած է. «Հպարտ ենք տեղափոխել «Armsat-1» անունով յայտնի մեր «Ուրտանեթա» արբանեակ, որ առաջին հայկական ռազմավարական արբանեակն է: Մենք կ'աջակցինք կառավարութեան որոշումներուն՝ ստեղծելով աշխատատեղիներ, տաղանդներ ու արտադրանք»:

ԱՄՆ Քանաւերալ հրուանդանէն արբանեակի յաջող արձակումէն յետոյ SATLANTIS-ը յայտարարած է հայկական պետական «Կէոքոսմոս» ընկերութեան հետ համաձայնագիր կնքելու մասին, որով ընկերութեան կը տրամադրուի Երկրի դիտարկման լիարժէք համակարգ:

«Ուրտանեթա»-ն, որ ստա-

ցած է աշխատանքային «ARMSAT-1» անունով, ունի 2 մ օբիթիքային տարածքային թոյլատուութիւնը: SATLANTIS-էն նշած են, որ հայկական կողմին հետ ունեցած համաձայնագիրը դրականօրէն պիտի ազդէ հայաստանեան էքոնոմիկային վրայ՝ աւելցնելով ոլորտային մասնագէտներու եւ ճարտարագետներու թիւը:

Կը նշուի, որ յաջող մեկնարկէն յետոյ առաջին հայկական արբանեակը լաւ վիճակի մէջ է ու պատրաստ է յառաջիկայ 4 տարիներու ընթացքին կատարելու իր աշխատանքը: 26 Մայիսին «ARMSAT-1»-ը առաջին կայը հաստատած է Երկրին հետ, արբանեակին բոլոր ենթահամակարգերը անխափան վիճակի մէջ են:

Արբանեակի առաքելութեան մանրամասնութիւններն ու առաջին արդիւնքները պիտի ներկայացուին Երեւանի մէջ՝ Սեպտեմբերին տեղի ունեցող «Սթարմոս» փառատօնի ծիրին մէջ:

ԵԱՀԿ-ի Կողմէ Ընդգծուած Է

Շարունակուած էր 1-էն

դութեամբ: Միւս հանդիպումը Մինսքի խումբին համանախագահութեան ձեւաչափով նախատեսուած էր կայացնել 1-3 Դեկտեմբերին, Սթոքհոլմի մէջ, ԵԱՀԿ ամէնամեայ նախարարական վեհաժողովի շրջանակներուն մէջ, սակայն ատրպէյճանական կողմը հանդիպումէն քանի մը ժամ առաջ չեղարկած է այդ հնգակողմ հանդիպումը:

«Նախքան հնգակողմ հանդիպումը, առանձին հանդիպումների

ընթացքում համանախագահները կողմերին էին ներկայացրել յստակ բանակցային օրակարգ: Յատկանշանական է, որ դրանից օրէն առաջ Վիեննայում տեղի ունեցած ԵԱՀԿ մշտական խորհրդի նիստում համանախագահները կրկին յստակօրէն արձանագրել էին իրենց մանտաթը եւ այս գործօններն էլ, համանախագահութեան ձեւաչափի եւ մանտաթի շուրջ ունեցած Ատրպէյճանի ընդհանուր վերաբերմունքին գուճահեռ, մեր կարծիքով, դարձան սթոքհոլմեան հանդիպման չեղարկման հիմնական

Համագաղութային Ընդունելութիւն Ի Պատիւ Ռաֆայէլ Պետրոս 21-րդ Կաթողիկոս-Պատրիարքին



Պատմական յիշատակելի երեկոյ մըն էր որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ Յունիսի 4ին, 2022 Լոս Անձելոսի Իրանահայ Միութեան հանդիսասրահին մէջ: Համագաղութային սոյն միջոցառումը կը նպատակադրէր ճաշկերոյթով մը պատուել հովուապետական անդրանիկ ալցելութեամբ քաղաքս գտնուող Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ռաֆայէլ Պետրոս 21-րդ Պատրիարք Կաթողիկոսը Կիլիկիոյ հայոց:

Բազմահարիւր հրաւիրեալներու մէջ ուշագրաւ էր ներկայութիւնը Հարաւային Գալիֆորնիոյ հայ համայնքի տարբեր յարանուանութեանց առաջնորդներն ու քաղաքական եւ այլ կազմակերպութիւններու ղեկավարները, ինչպէս նաեւ Լոս Անձելոսի, Պրոպէնքի եւ Կլենտոնի քաղաքապետութեանց ու սենատի ներկայացուցիչները եւ այլ հայ եւ օտար եկեղեցականներ:

Հրաւիրեալներուն բաժնուեցան գեղատիպ գրքոյկներ, որոնց մէջ կը պատկերազարդուէին Գերերջանիկ Տիրոջ կեանքի տարբեր հանգրուաններն ու իր նախաձեռնութեամբ կառուցուած Կլենտոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ աթոռանիստ եկեղեցւոյ շինութեան հանգրուանները:

Օրուան հանդիսավարուհիներ՝ Ալեքսանտրա Անանեանի եւ Միլվա Սեմերեանի ողջոյնի եւ բարի գալուստի ջերմ խօսքերէն ետք, ներկաները յորտնակալ ունկնդրեցին ազգային քայլերգները, կատարողութեամբ շնորհալի երգչուհի՝ ձիգել Հօշարեանի:

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ սեղաններու օրհնութեան աղօթքէն ետք սկսաւ ճաշի սպասարկութիւնը, Կրեկ Հօշարեանի եւ իր նուագախումբի ստեղծած խանդավառ մթնոլորտի ներքեւ:

Իրաւաբան Արսէն Դանիէլեան, իր սրտի խօսքին մէջ ներկայացուց Տէր Ռաֆայէլ Պետրոս ԻԱ Կաթողիկոս կեանքի բոլոր հանգրուաններն ու նուիրումը, ինչպէս նաեւ՝ եկեղեցւոյն ու ազգօգուտ գործերու բարեյաջող իրագործումները իր պաշտօնավարած բոլոր շրջաններուն մէջ:

Ներկաները մեծ հետաքրք-

րութեամբ դիտեցին Նինա Մեծյա-կոբեանի կողմէ պատրաստուած տեսաերկը մը, նուիրուած գերերջանիկ Տէր Ռաֆայէլ Պետրոս Կաթողիկոս Պատրիարքի շուրջ 50 տարիներու հոգեւոր ծառայողական գործունէութեան:

Մթնոլորտի գեղարուեստական բաժինին մէջ առանձնապէս փայլեցաւ շնորհալի երգչուհի՝ ձիգել Հօշարեան, որ իր դասական եւ հայրենասիրական երգերով խանդավառեց մթնոլորտը:

ԱՄՆ-ի եւ Գանատայի Հայ Կաթողիկէ Թեմի առաջնորդ Գերբ. Հ. Միքայէլ Եպս. Մուրատեան իր սրտի խօսքին մէջ մեծ դրուատանքով նկարագրեց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հոգեւոր Տիրոջ բարեմասնութիւնները: Արդարեւ մեծ է անոր վաստակը, քանի որ իր ողջ կեանքը նուիրած է եկեղեցւոյնութեան, դպրոցակերտումի եւ ցեղասպանութեան ճանաչման վսեմ գործին:

Տեղի ունեցաւ նաեւ հուշակագիրներու յանձնում Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ Գալիֆորնիոյ սենատի եւ կարգ մը քաղաքապետութեանց կողմէ:

Վերջին խօսք առնողն էր Տէր Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ Մինասեան Կաթողիկոս-Պատրիարքը: Ան իր շնորհակալութիւնները յայտնեց Աստուծոյ, Միքայէլ Եպիսկոպոսին եւ ազգային ներկայացուցիչներուն: Ան ի մէջ այլոց ըսաւ նաեւ «Միանականութիւնն անհրաժեշտ է, աշխարհը շատ արագ կը վազէ եւ եթէ մենք միաբան չըլլանք կը կործանինք: Կուսակցութիւնները հարստութիւն են ազգին: Բոլորս մէկ նպատակ ունինք՝ աշխատիլ հայ ազգի համար: Մենք պատրաստ ենք աջակցելու միասնականութեան գօրացման համար...» եզրակացուց ան:

Այս առթիւ տեղի ունեցաւ նաեւ նուէրներու բաշխում կարգ մը նուիրեալ անձնաւորութիւններու: Իսկ ամենապատիւ Տէրը լանջապանակ մը նուէր ստացաւ շրջանիս առաջնորդ Գերբ. Տ. Միքայէլ Եպս. Մուրատեանի ձեռամբ:

Հայրենասիրական մեծարանքի արժանի եւ յիշարժան երեկոյ մըն էր, որուն համար շնորհաւորելի են կազմակերպիչները:

«Պատիւս արժանաւորաց»:

պատճառները: Այնուամենայնիւ, Սթոքհոլմում ԵԱՀԿ ամէնամեայ նախարարական խորհրդաժողովի ընթացքում ԵԱՀԿ մասնակից պետութիւններին մեծամասնութեան, ինչպէս նաեւ մի շարք միջազգային կազմակերպութիւնների բարձրաստիճան ներկայացուցիչ-

ների կողմից յստակ ընդգծուել է ԼՂ հակամարտութիւնը ԵԱՀԿ Մինսք խմբի համանախագահութեան ձեւաչափում բանակցութիւններին միջոցով կարգաւորելու անհրաժեշտութիւնը, ընդգծեց ՀՀ արտաքին գործերու նախարարը:

Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Կարժարանի 42-րդ Տարեկան Խրախճանքը

Քորոնա համաճարակի սահմանափակումները պատշառ դարձած էին որ նախորդ երկու տարիներու Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ կարժարանի հրապարակային ձեռնարկները չհեղեղ հոշակուէին: Սակայն այս տարի, 4 Յունիս, 2022ին, այդ մէկն իրականացաւ մեծ յաջողութեամբ, շնորհիւ պատասխանատուներու լաւատեսութեան եւ վճռականութեան:



Ալթատինայի Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ կարժարանի համալիրի բացօթեայ շրջաբակին մէջ տիրապետող էր բեմահարթակի ճակտին գետեղուած լայնապատտառ Արարատ Լեռը: Բազմահարկ հրաւիրեալներու մէջ կ'երեւային հոգեւորականներ, հոգաբարձուներ, բարերարներ, ծնողներ եւ ուսուցիչներ: Բոլորն ալ եկած էին մասնակից դառնալու տարեկան հանդէս-խրախճանքի, հայրենական եւ ընկերային ջերմ մթնոլորտի ներքեւ, միաժամանակ նիւթապէս քաջալերելու այս կրթօճախի ազգանուէր ծառայութիւնը:

ները, որոնք իրենց խմբավարին՝ Արտաշէս Սինանեանի ղեկավարութեամբ կատարեցին հայկական ազգային եւ հայրենասիրական երգերու գեղեցիկ համադրում մը:

Բարի գալուստի եւ բացման խօսքերը կատարեցին Տիկին Արլին Տիտանեան եւ հանդիսավար Քելլին Մաթոսեան, որմէ ետք ներկաները յտընկալա ունկնդրեցին գոյգ հայրենիքներու եւ դպրոցի քայլերգները, կատարողութեամբ Սահակ-Մեսրոպի աշակերտներու, ղեկավարութեամբ Արտաշէս Սինանեանի:

Պատուելի ձէսն Մաթոսեան իր բանախօսութեան մէջ արժեւորեց Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ կարժարանի նուիրական առաքելութիւնը:

Պատուելի Ռիչի Աֆշարեանի բացման աղօթքէն ետք գոնկրեսականներ ձիւտի Չուրի եւ Անթոնի Փորթանթիւնոյի կողմէ վարժարանին ուղղուած գնահատանքի հռչակագիրներ փոխանցուեցան իրենց ներկայացուցիչներու կողմէ:

Տեսաերկրի վրայ ցուցադրուեցան բարերարներ Մայք Եուսուֆեանի, Սարգիս եւ Նուսէ Սեփեթեաններու եւ Մարք Սարեանի վերաբերեալ կենսագրական հակիրճ ծանօթութիւններ: Անոնք նաեւ պարգևատրուեցան Մայքլ Արամի յատուկ յուշաքանդակներով, առ ի գնահատութիւն վարժարանի բարգաւաճման սատարող իրենց մեծագումար նուիրատուութիւններուն եւ քաջալերանքին:

Գեղարուեստական կատարումներով մթնոլորտը խանդավառեցին շնորհալի երգչուհի Արաքսիա Ամիրխանեանը, ընկերակցութեամբ հայկական ժողովրդական գործիչներու համոյթին:

Աւարտին շնորհակալական եւ երախտագիտական սրտաբուխ խօսքերով հանդէս եկաւ տնօրէնուհի Տիկին Մարալ Պոյաճեան:

Առանձնապէս շնորհաւորելի են նաեւ Սահակ-Մեսրոպի աշակերտական երգչախումբի անդամներու կողմէ արտաբերուած երգերը:

Սոյն հաճելի եւ օգտակար խրախճանքին կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ դպրոցի բարգաւաճման ֆոտոսին:

Թուրքիան Այլեւս... «Յնդկահալ» ԶԷ

Կը լինեն էրտողանին սեփական ծրագրերն ու նպատակները կենսագործելու համար: Այս վերջին հանգամանքը, բնականաբար, հեռացնում է քեմալական թուրքիայից:

մտաւորականներ դէմ են արտաշատուէլ օղանաւակայանի քանդմանը: Նրանք դա համարում են Աթաթուրքի հետ մրցակցելու փորձ, քանի որ էրտողանին «նոյնիսկ Աթաթուրք անունն է անհանգստացնում»:

Այս օրերին քանդում են Ստամպուլի Աթաթուրքի անունանւոյն օղանաւակայանը, որտեղ նախատեսուած է ստեղծել կանաչ գօտի, որը կը ներառի այգի, տարբեր մարզաձեւերի համար նախատեսուած մարզահրապարակներ, հիւանդանոց եւ սրճարան, ինչպէս նաեւ կը կառուցուի 52 հազար քմ մակերեսով մզկիթ: Այդ մասին գրում է ընդդիմադիր թերթերից մէկը: Օղանաւակայանը կանաչ գօտու վերածելու նախագծի մասին յայտարարուել էր դեռ 2018 թ., սակայն թուրքիական ապամոնտաժման աշխատանքներն սկսուել են վերջերս: Բոլոր ընդդիմադիր քաղաքական գործիչները, ընդդիմադիր լրատուամիջոցները եւ որոշ

Է.Ա.Մ.Ս.Ս.Ս. Նախ եւ առաջ ընտանիքի պատմութիւնը խիստ տպաւորիչ էր: Բագրատ աղբարիկի համեստութիւնը, կեանքի պարտադրանքներուն հեզաբար համակերպիլը, լրագրողի, հայու եւ թուրքիացիի յատկանիշներով պայքարիլը եւ անգիջող կամքը տպաւորիչ էր:

Բոլորը պատմելիք հեքեաթ մը ունին: Կարեւոր եղածը այդ պատմումը ներկայացնելն է: 19 Յունուար թուականը թէ ինձ եւ թէ Բագրատ աղբարիկի համար մեծ նշանակութիւն ունեցող ընդհատման պահ մըն է: Արդարեւ գրոյցի ընթացքին ալ, երբ նիւթը այդ տխուր օրուան հասաւ, ակամայ ընդհատեցինք մեր խօսակցութիւնը:

Ի.Է.- Այս հատորը ինքնին կը նկարագրէ՞ Եսդուգեանի կեանքը:

Է.Ա.Մ.Ս.Ս.Ս. Անշուշտ որ: Իմ շատ կարեւորած ոտքի մնալու, դիմադրելու կամքը Բագրատ աղբարիկը բնութագրող լաւագոյն յատկանիշն է: Մանաւանդ ալ նիւթական առումով կիրքեր չունենալը: Բագրատ աղբարիկի ընտանիքին սանիկներէ մէկու խօսքը գիրքին խորագիրը դարձաւ: «Շատ վեր մի՛ նայիր ֆեսթ կ'իշխայ գլխէդ»:

ԻՇԽԱՆ ԷՐՏԻՆՉ- Եղեանք վերջ Պոլիս գաղթողներու համար այս մեծ քաղաքը պանդխտութեան վայր մը ըլլալով կ'ընկալուի: Դուք ձեզ պան-

դուխտ կը զգա՞ք:
ԲԱԳՐԱՏ ԷՄԻՆՈՒԳԵԱՆ-Մենք համակերպած ենք այս քաղաքին: Իւրացուցած ենք քաղաքի կենցաղը: Անցեալին գիւղացի ընտանիքներ էինք, իսկ այժմ քաղքենի: Ուրեմն ես գիս պանդուխտ չեմ զգացած այս քաղաքին մէջ, մինչեւ որ այցելեցի Շապինգարահարարը, թամզարան կամ Ազպտերը: Այդ վայրերը մեր տոհմի բնօրրանն էին եւ այդ հողերուն վրայ կոխելով ես ալ տարուեցայ Յակոբ Մանուրիի նման Պոլիսը գաւառ մը ըլլալով ընկալելու հոգաբանութեան:

Ի.Է.- Մարգար պապի կեանքը նման է ՄԳճուրիի հետ:

Բ.Գ.-Ճիշդ է: Պապ Մարգար եւ Յակոբ Մանուրի զուգահեռ կեանքներ ապրած են: Համարեա նոյն վայրերէն նախ պանդխտութեան համար եկած են Պոլիս եւ ապա մինչեւ իրենց վերջին շունչը ապրած են այս քաղաքին մէջ: Երկուքն ալ փոռապան էին, Ա. Աշխարհամարտին երկուքն ալ զինուորագրուեցան եւ այդ շրջանին երկուքն ալ կորսնցուցին իրենց ընտանիքները: Միակ տարբերութիւն որ կար իրենց

Ի.Է.- Մարգար պապի կեանքը նման է ՄԳճուրիի հետ:

Բ.Գ.-Ճիշդ է: Պապ Մարգար եւ Յակոբ Մանուրի զուգահեռ կեանքներ ապրած են: Համարեա նոյն վայրերէն նախ պանդխտութեան համար եկած են Պոլիս եւ ապա մինչեւ իրենց վերջին շունչը ապրած են այս քաղաքին մէջ: Երկուքն ալ փոռապան էին, Ա. Աշխարհամարտին երկուքն ալ զինուորագրուեցան եւ այդ շրջանին երկուքն ալ կորսնցուցին իրենց ընտանիքները: Միակ տարբերութիւն որ կար իրենց

Ի.Է.- Մարգար պապի կեանքը նման է ՄԳճուրիի հետ:

Բ.Գ.-Ճիշդ է: Պապ Մարգար եւ Յակոբ Մանուրի զուգահեռ կեանքներ ապրած են: Համարեա նոյն վայրերէն նախ պանդխտութեան համար եկած են Պոլիս եւ ապա մինչեւ իրենց վերջին շունչը ապրած են այս քաղաքին մէջ: Երկուքն ալ փոռապան էին, Ա. Աշխարհամարտին երկուքն ալ զինուորագրուեցան եւ այդ շրջանին երկուքն ալ կորսնցուցին իրենց ընտանիքները: Միակ տարբերութիւն որ կար իրենց

Ի.Է.- Մարգար պապի կեանքը նման է ՄԳճուրիի հետ:

Բ.Գ.-Ճիշդ է: Պապ Մարգար եւ Յակոբ Մանուրի զուգահեռ կեանքներ ապրած են: Համարեա նոյն վայրերէն նախ պանդխտութեան համար եկած են Պոլիս եւ ապա մինչեւ իրենց վերջին շունչը ապրած են այս քաղաքին մէջ: Երկուքն ալ փոռապան էին, Ա. Աշխարհամարտին երկուքն ալ զինուորագրուեցան եւ այդ շրջանին երկուքն ալ կորսնցուցին իրենց ընտանիքները: Միակ տարբերութիւն որ կար իրենց

Շար.ը էջ 15



ՆԻՒՈՒՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՄԵՐՏԵԱՆ ԹԵՂ

Նովանաորութեամբ

Թեմիս Բարեգան Առաջնորդ

ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

Կազմակերպութեամբ

«ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ





ՀԱՅ ՀԻՒՊԱՏՈՍԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ՝

Լուս Անճելլոսի նախկին Ընդհանուր Նիստաւոր

Վսեմաշուք Տիար ԱՐՄԷՆ ՊԱՅՊՈՒՐԹԵԱՆ

Հինգշաբթի, Յունիս 16, 2022, Երեկոյեան ժամը 7:00ին

Առաջնորդարանի «ԱՐՄԷՆ ՆԱՍԲԱՐ» սրահին մէջ
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Սուտքը ազատ

Նիստաւորութիւն

Հայոց Ցեղասպանութեան Նահատակ Եկեղեցականներէն՝ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան (1868 - 1915)

ԱԽԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Մեծ Եղեռնի նահատակ բարձրաստիճան եկեղեցականներու փառանքին մէջն էր Ներսէս Եպս. Դանիէլեան (1868-1915): Ան գրական, վարչական, մանկավարժական, քարոզչական եւ յեղափոխական արգասաւոր գործունէութիւն մը ունեցած է յիշատակութեան արժանի: Հանրածանօթ բանասէր ու հրատարակիչ Թէոդիկի (Թէոդոս Լափճինճեան) վկայութեամբ՝ «իր անձնուրուիթեամբ եւ բազմարդիւն ու վշտաշարչար կեանքով հայ եկեղեցական դասուն պատիւ այս սրբազանը» ծնած է 16 Մայիսին, Եարփուզ (Եփեսոս) (Ձէյթունի արեւելքը գտնուող գիւղ մը), Տէր Յովհաննէսի երգիքի տակ: Աւագանի անունով՝ Գէորգ: Նախակրթութիւնը կը ստանայ Ալպիսթանի (Եարփուզէն հիւսիս) ազգային վարժարանին մէջ: 1883-ին կ'ընդունուի Սիսի Կաթողիկոսութեան Մալաթիանի ժառանգաւորաց բաժինը: 1886-ին, որպէս փայլուն աշակերտ կ'ուղարկուի Կ. Պոլիս՝ Սամաթիոյ Սահակեան վարժարանը, ուր կը ստանայ ազգային-յեղափոխական դաստիարակութիւն՝ մէկ կողմէ գրագէտ-ուսուցիչ Մելքոն Կիւրճեանի (Հրանդ) շունչին տակ, միւս կողմէ՝ յաճախակի հանդիպումներով անուանի յեղափոխական, Սամոյ ապստամբութեան կազմակերպիչ Մեծն Մուրատի (Համբարձում Պօյաճեան) հետ: Այս շրջանին արդէն կը ձեւաւորուի մարտական մարզը եւ խոր համոզմունքով կ'անդամագրուի Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան շարքերուն:



ամիս արգելափակումէ ետք, ընդհանուր ներման արժանանալով ազատ կ'արձակուի: Սակայն, ուրիշ ամբաստանութենէ մը ետք, Դամասկոս կ'աքսորուի:

1898-ին Կ. Պոլսոյ պատրիարք Մողաբիա Արք. Օրմանեանի երաշխաւորութեամբ, Ներսէս վարդապետ Պոլիս կը տեղափոխուի նշանակուելով Սկիւտարի Սուրբ Կարապետ եկեղեցու քարոզիչ: Միաժամանակ կը դառնայ Մողաբիա պատրիարքին անձնական քարտուղարը: Ակամայ պոլսաբնակութեան (կամ՝ աքսորի) այս շրջանը կը յատկանշուի կրթական, քարոզչական, հրապարակագրական եւ գրական աշխատանքներով. կը դասաւանդէ Ներսէսեան, Սուրբ Խաչ Արամեան վարժարաններուն եւ Ազգային Որբանոցին մէջ: Արդէն 1880-ականներէն կ'աշխատակցէր մամուլին եւ այս հանգրուանին առաւել կ'երեւին իր ստորագրութիւնները (Պոլսոյ եւ Իզմիրի մէջ) գանազան բնոյթի յօդուածներու տակ (հոգեւոր, բարոյագիտական, յուշագրական, արձակ, ոտանաւոր), ինչպէս՝ «Մասիս», «Բիւզանդիոն», «Սուրհանդակ», «Արեւելեան Մամուլ», «Մաղիկ», «Լոյս» եւ այլն: Ան կ'օգտագործէր Սասկան վարդապետ, Մեղրունի, Կիլիկեցի, Խօսնակ եւ այլ գրչանուններ, սակայն ամենաչալտին՝ Սասկան վարդապետն էր (այս անունը գինք տուած է Խրիմեան Հայրիկ. նաեւ անկէ ստացած է ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք): Գալով քարոզներուն, վկայութիւնները բազմաթիւ են, որ ան եղած է բարձրաբան, խանդավառող եւ հայրենասէր քարոզիչ: 1903-ին լոյս կը տեսնէ անոր առաջին գիրքը՝ «Կեանքը Առանց Հաւատքի» վերնագրով, որ կը տպուի Վիեննայի մէջ: Հատորը քարոզներու ժողովածու մըն էր՝ աւետարանական, բարոյագիտական եւ ազգային տօնե ըու վերաբերեալ նիւթերով: Բայց, անոր կեանքը Պոլսոյ մէջ հեշտ չէր, քանզի մշտապէս կը գտնուէր օսմանեան ոստիկանութեան հսկողութեան տակ եւ բազմիցս ձերբակալուելով տարուած է ոստիկանատուն, ինչպէս Պանք Օթոմանի դէպքէն ետք: Միշտ ալ շնորհիւ պատրիարքին միջամտութեան դուրս եկած է բանտէն:

Ներսէս վարդապետին թրքական իշխանութիւնները արգելած էին Կիլիկիա երթալ: Սակայն, 1907-ին, Սիսի Սահակ Բ. կաթողիկոսին եւ Օրմանեան պատրիարքին ազ-

դու միջամտութեամբ եւ երաշխաւորութեամբ, Սոսոյ վանքէն դուրս չգալու պայմանով, կը փոխադրուի Սիս եւ Յունիսին կը ստանանէ վանքին ժառանգաւորաց վարժարանին տեսչութեան պաշտօնը: 1908-ին, Սահմանադրութեան հռչակումէն ետք, կը նշանակուի Հաճնոյ առաջնորդ: 1909-ին, Ատանայէն սկսած եւ Կիլիկիոյ գանազան վայրերը շարունակուած համատարած կոտորածի օրերուն, ան կը ղեկավարէ Հաճնոյ ինքնապաշտպանութիւնը: Սահակ կաթողիկոս սուրհանդակով մը կ'իմացնէր Կիլիկիոյ զարհուրելի վիճակը եւ Սիսի վտանգուած ըլլալը եւ հաճնցի մարտիկներ կը խնդրէր պաշտպանութեան համար: Ներսէս Մ. վարդապետ կը հեռագրէ որ 500 մարտիկներ պատրաստ են ուղղուելու Սիս: Բայց հեռագիրը թուրքերու ձեռքը իյնալով, կը փութան հաշտութիւն գոյացնել կաթողիկոսին հետ. կը փրկուի Սիսը ստոյգ ջարդէ, մինչ Հաճնի մէջ տեղի կ'ունենան բախումներ նախադրած խուժանին հետ: Հաճնոյ Սբ. Գէորգ եկեղեցու մէջ տեղի կ'ունենայ խորհրդակցական ժողով եւ կը կազմուի ինքնապաշտպանական խումբեր: Այս շարժումը կը ղեկավարէր մարմին մը, որուն գլխաւորն էր առաջնորդ Ներսէս Մ. վարդապետը: Կիլիկիոյ 1909-ի կոտորածին ականատես եւ ապա Մեծ Եղեռնի նահատակ Յակոբ Թէրզեան (Յակթէր) հրապարակած է վաւերագրական եւ շահեկան գիրք մը՝ «Կիլիկիոյ Աղէտը», ուր կը գրէ. «Տեղուոյ առաջնորդ Տ. Ներսէս Մ. վարդապետը իր կեանքը ազգին նուիրած, այս կարևոր պէս տեղացող կապարներու մէջէն հեռագրատուն եւ այլ պէտք եղած տեղերը կը դիմէր անձամբ, ամէն վտանգ աչք առած»:

Դէպքերուն հանդարտելն ետք, ան դարձեալ կը ձերբակալուի որպէս ինքնապաշտպանութեան կազմակերպիչ եւ կը դատուի էրզնէի պատերազմական ատեանին առջեւ: Այս մասին ան կը գրէ իր «Կախաղանին Ստուերը» յօդուածին մէջ, թէ ինչպիսի շարչարանքներով Հաճնէն հետիոտն գինք կը տանին Մարաշ եւ էրզնէ՝ բանտէ բանտ եւ ատեանէ ատեան. «1909 Յունիսին հեծեալ ոստիկաններով Հաճնէն կը տարուէի հոն. չորս օրուան ճանապարհ. բնութիւնը կը ժպտէր իմ շուրջս, մինչ ես կախաղանի սեւ վախտին ծանրութիւնը կը գզգզի ուսերուս վրայ»: Այս նոր Գողթան կ'աւարտուի շուրջ հարիւրօրեայ բանտարկութեամբ, երբ Սահակ հայրապետ ազդու գրութեամբ՝ օրուան իշխանութիւններէն կը պահանջէ ազատ արձակել Հայր Ներսէսը: Ազատ արձակուելէ յետոյ, Սահակ կաթողիկոսին կողմէ 1910-ին կը դրկուի Ատանա, որպէս կաթողիկոսական փոխանորդ: Այս հանգրուանին իր առաջին գործը կ'ըլլայ ամօքել վշտահար ժողովուրդը, գօտեպնդել Ատանայի ջարդէն փրկուած հայութիւնը եւ զարկ տալ վերաշինութեան աշխատանքներուն: 1947-ին, Փարիզի «Արեւմուտք» շաբաթաթերթին մէջ Կիլիկեցի ստորագրութեամբ յուշագրողը կը գրէ. «Կիլիկիոյ մէջ՝ մեծախորհուրդ Սահակ Կաթողիկոսէն ետք եթէ մէկը կար, որ Կիլիկիան քար առ քար ճանչցած, եւ համայն Կիլիկեցիներէն ճանչց-

ուած ու սիրուած էր՝ ան ալ՝ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեանն էր: Բոլոր կիլիկեցիները անխտիր կը սիրէին քաջ, անձնուէր, համակ գգացում ու գորով այս հովիւր...: 1909-ին՝ Սասկան վարդապետը ուխտի կու գար Տէօրթ-Եոլ, սիրելի քաղաքին մարտիկներուն հետ, հոն հաւաքուած որբերը տեսնելու համար: Այս տողերը գրողը՝ մէկն է այդ որբերէն, որոնց լուր կու տան՝ թէ մեծ, շատ մեծ մարդ մը պիտի գայ, «Կաթողիկոսէն ետք՝ ամէնէն մեծը, որ մեզ շատ կը սիրէ»»: Հետաքրքրական դէպք մըն ալ Այնթապէն, 1908-1909 թուականներէն. յուշագրողը կը գրէ. «Ներսէս վարդ. Կիրակի օր մը, պատարագի արարողութենէն վերջ «կրակ ու բոց» քարոզ մը կ'արտասանէ վարդապետան կրթարանի լսարանի բեմէն՝ «Ազատութիւն եւ ինքնապաշտպանութիւն» բնաբանով, ըսելով՝ «Միւրելի հայ ժողովուրդ, այժմ օսմանեան Սահմանադրութիւնը հռչակուեցաւ, եղբայրութիւն եւ հաւասարութիւն կը քարոզուի. Եղբայրներ՝, մի հաւատաք հաւասարութեան հռչակումին: Ուժեղը կը պարտադրէ տկարին՝ իր գաղափարին եւ ուղեղի՞ն հնազանդիլ: Ուստի մեզ հայերուս կը մնայ գինուիլ ու կազմակերպուիլ՝ զօրաւորէն չլիանուելու համար...»

Արթնցէք եղբայրներ ձեր թմբիւրէն, նախճիրներու զոհ շերթալու եւ շոչնշանալու համար գինուեցէ՛ք, կազմակերպուեցէ՛ք...»: Եւ իր խօսքին ազդու շեշտ մը աւելցնելու նպատակով, իր ձեռքին գաւազանէն սուր մը հանելով օդին մէջ կը ծօծէ՝ «Օրուան պահանջքը եւ իմ այժմէակաւ պատգամս այս է» ըսելով: Այս դէպքէն յետոյ ժողովուրդը անոր «սուինաւոր վարդապետ» անունով կը յիշէր»: 1911 Մարտին, Սահակ Բ. կաթողիկոս խապայեանի ձեռամբ կը ձեռնադրուի Եպիսկոպոս, օժակից ունենալով Խորէն Դիմաքսեան եւ Հրանդ (ապա՝ Եղիշէ) Կարոյեան վարդապետները: Ապա կը կոչուի Հայկազի առաջնորդական տեղապահի պաշտօնին եւ Հոկտեմբեր 17-ին հանելով իր նոր պաշտօնատեղին՝ կը ստանանէ Բերիոյ դարաւոր թեմին հովուութիւնը: Վարդան Եպս. Տէմիրճեան կը գրէ. «Հայկազի առաջնորդական աթոռունին վրայ բարւօք ծառայութիւն մատուցած է թեմէն ներս, զարկ տալով յատկապէս կրթական յարկերուն եւ անոնց բարոյաւարձման» («Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեան», Անթիլիաս, 1980, էջ 293): Նոյն օրերու մասին վարդ. Բէշիշեան կը գրէ. «Հայկազի մէջ իր բազմարդիւն գործունէութեան պտուղներէն կարելի է համարել 1913-ին Հայ Գրերու Գիւտի 1500-ամեակին նուիրուած մեծաշուք տօնակատարութիւնները, Հ.Բ.Լ. Միութեան հիմնադրութեան 7-րդ տարեդարձին առիթով կազմակերպուած փառահեղ հանդիսութիւնները, 1913-1914 թուականներուն կայացած աննախընթաց Ողիմպիական խաղերը եւ այլ կարեւոր ձեռնարկներ: Հայկազի մէջ իր անմիջական ջանքերով ու նախաձեռնութեամբ հաստատուած են շարք մը միութիւններ, լսարան,

Մեծ Եղեռնի 60-Ամեակը Եւ «Ձարթիր Լաօ»Ն (ժողովրդական Երգի Ձայնագրման Պատմութիւնը)

ԳԵՆԵՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Էմին Արիստակէսեան, վստահ եմ՝ քէրերին է ծանօթ այս կոմպոզիտորի անունը: Հիմնականում Արիստակէսեանը ճանաչուեց «Պրոմէթէա» բալետով եւ ձայնի, դաշնամուրի համար մշակուած «Սահակ Պարթեւի Հինգ շարականները» ստեղծագործութեամբ:

Ես եւ Էմին Արիստակէսեանը համատեղ աշխատել ենք Հայաստանի Ռադիոյի Երաժշտական խմբագրութիւնում: Էմինը եկաւ Ռադիոկոմիտէ փոխարինելու «անփոխարինելի» Արմէն Յովհաննիսեանին: Տարիներ շարունակ տարաբնոյթ խօսակցութիւններ էին շրջում կոմպոզիտորների եւ յայտնի երաժիշտների շրջանում, թէ ինչո՞ւ Ազգային Ռադիոյի Երաժշտական Հաղորդումների Գլխավոր խմբագրութիւնը պիտի ղեկավարի մասնագիտութեամբ ոչ երաժիշտ Արմէն Յովհաննիսեանը, երբ, ըստ իրենց, երաժիշտների մէջ կան շատ աւելի բանիմաց եւ երաժշտութեան բնագաւառում որոշակի ներդրում ունեցած երաժիշտներ:

Սակայն, ես, որ երկար տարիներ աշխատել եմ Արմէն Հովհաննիսեանի հետ, կարող եմ վկայել, որ նա բազմակողմանի զարգացած մտաւորական էր, հոյակապ թարգմանիչ ու լրագրող: Եւ երաժշտութիւնից էլ՝ շատ աւելի լաւ էր հասկանում, քան թէ կոմպոզիտորի (երաժշտանոց) աւարտած բազմաթիւ երաժիշտներ...

Ինչեւէ, գանք մեր Էմին Արիստակէսեանին:

1975ի մօտերը կոմպոզիտոր Էմին Արիստակէսեանը նշանակուեց որպէս Ռադիոյի երաժշտական հաղորդումների խմբագրութեան գլխավոր խմբագիր: Խմբագրութեան բոլոր աշխատողների համար շատ շուտ պարզ դարձաւ, որ Էմինը, թէեւ չափազանց բարի, ազնիւ ու պատրաստակամ անձնաւորութիւն, բնաւ այն մարդը չէր, որ լիարժէք ձեւով կարողանար փոխարինել Արմէն Յովհաննիսեանի նման փորձառու, գիտակ ու վարչական կարողութիւններով օժտուած մտաւորականին:

Էմին Արիստակէսեանին ժամանակ էր հարկաւոր, որպէսզի հարմարուէր միջավայրին, ճանաչէր մարդկանց ու գործի բնոյթին: Բոլոր խմբագիրներն էլ առաջին իսկ օրից հասկացան, որ նա այն մարդը չէր, որ կարողանար լիարժէք ձեւով ղեկավարել Ռադիոկոմիտէի ամէնակարեւոր խմբագրութիւններից մէկը:

Երկու երեք խմբագիր գրականներաժշտական հաղորդումներ էինք պատրաստում, որոնց համար, հոնորարի կարգով Յաւելավճար էինք ստանում: Որպէս օրէնք, գլխավոր խմբագիրը պարտաւորուած էր կարգաւ այդ հաղորդումների գրական նիւթը, սակայն Էմինը առանց կարգալու ստորագրում էր նիւթը, ոչ յաճախ հարցնելով, թէ ինչի մասին է նիւթը:

Նման «բացթողում» հագուակերտ երեւոյթ էր Արմէն Յովհաննիսեանի հետ, սակայն, եթէ լինում էլ էր, պատճառը՝ փորձուած վստահութիւնն էր ենթակայի նկատմամբ:

Այդ կարգի «թերութիւնները» չխանգարեցին որպէսզի մենք լաւ ընկերներ դառնանք: Մեր ամէնօրեայ հանդիպումների ընթացքին

քին զգում էի, որ Էմինը շատ անգամ տուն չէր ուզում գնալ, եւ նախընտրում էր իմ մեքենայով գնալ գարեջրատուն: Եւ, որովհետեւ, ես էլ էի սիրում գարեջուր, մանաւանդ՝ Լենինականի արտադրութեան, հաճոյքով ընկերանում էի նրան: Ծատ անգամ էլ մի քանի շիշ գարեջուր գրկած, Էմինի գնած ապխտած ձուկը վերցրած՝ յայտնուում էինք մեր տանը:

Ծատ լաւ էմ չիշում այդ օրը՝ 1975 թուականի Ապրիլի 22ը: Ես եւ Էմինը կէսօրուայ մօտերքը եկանք մեր տուն: Ընկերոջս եգիպտական գարեջուր էի հիւրասիրելու: Նրա՞ն է ամէնալաւ, «կատարը տաքացած» պահին, խօսակցութիւն գնաց Ապրիլի 24ին եթերով տրուելիք երաժշտական հաղորդումների մասին:

Ախր, Էմին ջան, ասում եմ նրան, մի նոր երգ, երաժշտութիւն է անհրաժեշտ եթէր սիւնել մեր ժողովրդի համար, ի վերջոյ՝ Մեծ Եղեռնի 60ամեակն է, ոգեշունչ մի բան է հարկաւոր, հասկանում ես, թէ չէ՞՝ անընդհատ տխուր, սգոյ երաժշտութիւն, էն էլ՝ հիմնականում օտար՝ Գրիգ, Շոպէն, Չայկովսկի, ո՞րքան կարելի է: Հերիք չի՞ սպանք, բա պահանջատիրութիւնն ո՞ւր մնաց:

Լաւ, խելացի բան ես ասում, բայց ինչո՞ւ ես այսքան ուշ գլխի ընկել, եթէ ժամանակին մտածէիր այդ մասին՝ մի խելամիտ որոշում կը կայացնէիր, օր չի մնացել, երկու օրից Ապրիլի 24ն է:

Ուշ չէ Էմին..., ես արդէն մտածել եմ..., եւ վաղո՞ւց..., եթէ թոյլ տաս՝ երկու օրուայ ընթացքում կ'իրականացնեմ այն՝ ինչի մասին վաղուց եմ երազել:

Ասա՛, ասա տեսնեմ, թէ դա ի՞նչ մտայղացում է, որ երկու օրուայ ընթացքում կարող ես իրականացնել: Եթէ խելքի մօտ բան է՝ ինչո՞ւ չէ:

Դու, վստահ եմ, գիտես «Ձարթիր Լաօ» ժողովրդական երգը: Ի հարկէ գիտեմ, ո՞վ չգիտի...:

Այդ երգը դեռ իր իսկական գնահատականին չի արժանացել: Դա, այնպէս պարզ, օրորոցի երգ չէ: Այդ երգին պիտի մօտենալ այլ տեսանկիւնից, ինչպիսին արել է կոմպոզիտոր Էրուսրակ Բաղդասարեանը՝ Հենրիկ Մալեանի «Եռանկիւնի» ֆիլմի երաժշտութիւնը գրելու ժամանակ: Վստահ եմ՝ նայել ես այդ սքանչելի ֆիլմը, որի աւարտին, որպէս մարտակոչ հնչում է «Ձարթիր Լաօ» երգը տաղանդաւոր երգիչ Ռուբէն Մաթեոսեանի կատարմամբ:

Լա՛ւ, ասենք թէ չիշում եմ, յետո՞յ ինչ..., ասելիքդ ասա:

Յետոյ այն, որ ես այդ երգի կատարումը պատկերացնում եմ տղամարդկանց երգչախմբով եւ սիմֆոնիկ մեծ նուագախմբով: Եւ ճիշդ կը լինի, եթէ այն հնչի հենց Ապրիլ 24ի օրը եւ այն էլ՝ օրուայ ընթացքին մի քանի անգամ, իսկ գիշերն էլ՝ Սփիւռքի մեր հայրենակիցների յամար:

Է՛, հասկացայ, խօսք չկայ, լաւ գաղափար է, ժամանակին անէիր, ո՞վ էր քեզ խանգարում: Ամէն միջոց կայ ձեռքիդ տակ, երչախումբն էլ կը վարձեիր: Հիմա եկել, ասել էնք վերջին վայրկեանին, նո՞ր միտքդ ընկաւ, ո՞ւր է ժամանակը բարեկամս:

Էմին, եթէ դու ինձ թոյլ տաս,

ես երկու օրուայ մէջ կ'իրականացնեմ այդ երգի ձայնագրութիւնը: Էդ ո՞նց կը հասցնես Հենրիկ, դու ի՞նչպէս կարող ես մէկ օրուայ ընթացքում թէ գործիքաւորել, թէ օրկեստրի նոտաները գրել..., երգչախումբ, պարտիտո՞ւր, դու գժուե՞լ ես, ինչ է...

Չէ, ո՛չ, չեմ գժուել, միայն թէ թոյլ տուր, որպէսզի իրականացնեմ վաղուցուայ երազըս: Միայն բանաւոր համաձայնութիւն եմ ուզում, ուրիշ ոչինչ: Պարտիտուր չի լինելու, որը գրելու համար երկար ժամանակ կը պահանջուի, ամէն ինչ ուղեղումս է, միայն նուագախմբի եւ երգչախմբի նոտաներն եմ գրելու: Ինքս էլ անգիր ղեկավարել եմ կատարումը:

Իսկապէս դու խենթ ես եղբայրս, ի՞նչպէս ես հասցնելու այդ ամէն իրականացնել ընդամէնը մէկ օրում..., չգիտեմ, չգիտե՞մ..., արդէն գլուխս ցաւում է...ինչ ուզում ես արա, ազատ ես քո գործօրութիւնների մէջ:

Չա՛, չմոռնամ ասել, որ ինքս ոչ մի վճարում չեմ ուզում:

Դէ ասա ամէն ինչ որոշել ես էլի, էլ ինչո՞ւ ես ինձ հարցնում..., արա՛, արա ինչ ուզում ես, Աստուած հետդ, միայն թէ հիմա ինձ տուն տար, ետ արի ու անցիր գործիդ:

Հազիւ մի կէս ժամ տեւեց Էմինին տուն տանելն ու վերադառնալը: Ես վստահ էի, որ մինչեւ յաջորդ օրուայ կէսօրին կը հասցնեմ լուծել նոտաների տառապալից աշխատանքը: Մնում էր կարգաւորել երգչախմբի, նուագախմբի եւ ձայնագրման ստուդիայի հարցերը:

Անմիջապէս անցայ հեռախօսի գլխին: Հեռաձայնում եմ Երգչախմբային ընկերութեան երգչախմբի ղեկավար, շնորհալի խմբավար գործուկեայ Էմմա Ծատուրեանին եւ բացատրում թէ ինչը՝ ինչոց է:

Էմմա Աղաբեկովնա, խնդրում եմ երգչախմբի տղաներին վաղը ժամը 12ին ուղարկել Ռադիոկոմիտէ՝ ցուցակագրուած անուններով, որպէսզի մոտքին խնդիրներ չծագեն:

Ախր ես այդ ժամին փորձ ունեմ է՛..., չի լինի՞, որ ժամը մէկին գան:

Չէ՞, ո՛չ, չի լինի, կը ներէք Էմմա Աղաբեկովնա, ժամը մէկին նուագախմբի հետ է լինելու փորձը, իսկ երկուսին՝ ձայնագրութիւնն է:

Համա եամանն ես հա՛..., բայց ասեմ, որ լաւ բան ես մտածել, ապրես մահատրօ, դէ որ այդպէս է՝ ես էլ մի նուէր կ'անեմ քեզ համար: Ի՞նչ նուէր էմմա Աղաբեկովնա, ինձ նուէր պէտք չէ, ասեմ որ երգչախմբի տղաները վճարուելու են:

Ինչ լա՛ւ, տղերքս կ'ուրախանան: Իսկ իմ նուէրը կը լինի մեր ընկերութեան հաշուին Մարիետային վեց հոգուց կազմուած խմբավարների խմբի հետ երկու շաբա-

թով Բուլղարիա պտոյտի ուղեգիր յատկացնելը:

Համաձայնութիւնը կնքուեց: Յաջորդ հեռաձայնի «դհուր»

Ռադիոյի սիմֆոնիկ նուագախմբի ղեկիժոր Ռաֆայէլ Մանգասարեանն էր:

Ուրեմն վաղուայ փորձս «խլում» ես էլի, ասում է դիրիժորը եւ աւելացնում. կատակ եմ Հենրիկ ջան, նման հայրենասիրական գործի համար կ'ուզես տաս օր էլ տամ նուագախումբը: Վաղը ես էլ ներկայ կը լինեմ ձայնագրութեանը:

Ծատ կարեւոր մի արգելք էլ կայ: Երգչախմբի համար փորձասրահ է անհրաժեշտ:

Միակ տարբերակը Ռադիոյի ժողգործիքների համոյթի խոշոր փորձասենեակն է: Ուրեմն՝ հեռաձայն համոյթի ղեկավար՝ Մանուէլ Բեգլարեանին:

Ջանդ սաղ ըլնի Հենրիկ ջան, կ'ուզես էն մի ժամն էլ վերցրու, բա մենք ո՞ր օրուայ ընկերներ ենք, որ իրար չ'օգնենք, էն էլ՝ նման պատասխանատու գործի համար:

Կազմակերպչական գործերն աւարտուած են: Հիմա մնում էր ամէնակարեւորը՝ երգը մշակելն ու գործիքաւորելը, նոտաներ գրելը սեւ թանաքի գրիչով: Այդ տարիներին Հայաստանում գոյութիւն չ'ունէր վերատպման (XEROX) մեքենան: Կարծում եմ ամէնքի համար էլ հատակ է թէ ինչ տառապանք է 50 նոտաթուխի նոտաներով լցնելը՝ թէկուզ եւ՝ իւրաքանչիւր էջում 810 տող:

Տասնըվեց ժամ անդադար, անընդմէջ աշխատելուց յետոյ ամէն ինչ պատրաստ էր: Ապրիլ 23ին, ըստ հերթականութեան փորձերից յետոյ, ժամը 3ին մեծագոյն ոգեւորութեան պայմաններում իրականացրինք այդ՝ իսկական հայրենասիրական, բոլորի արտից խօսող ու հարգատու երաժշտութեան, ժողովրդական «Ձարթիր Լաօ» «երգի մնայուն ձայնագրութիւնը»:

Աւարտուել էր ձայնագրութիւնը եւ ամէնքը պատրաստուած էին դուրս գալ ստուդիայից, միկրոֆոնի միջից լսուեց հնչիւնային ռեժիսորի ձայնը.

Խնդում եմ միայն երգչախմբին դուրս գալ ստուդիայից: Չայնագրում ենք միայն նուագախմբին:

Պարզուեց, որ երգիչ Յովհաննէս Բաղալեանն է զանգահարել ստուդիա եւ խնդրել իր համար ձայնագրել միայն նուագախմբին:

Ես ու Էմին Արիստակէսեանը տակնուվրայ արեցինք Ապրիլ 24ի երաժշտական ծրագրերը եւ, ուր որ հարմար գտանք՝ տեղաւորեցինք «Ձարթիր Լաօ» խմբերգը: Նոյն գիշերն իսկ «Ձարթիր Լաօ»-ն մի քանի անգամ հաղորդուեց արտասահմանի մեր հայրենակիցների համար:

Մէկ շաբաթ անց, նուագախմբի ձայնագրութեան վրայ «Ձարթիր Լաօ»-ն անմահացրեց փառաբանուած երգիչ Յովհաննէս Բաղալեանը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ
ՓԱՍՍԵՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Հայաստանի Հաւաքականը Երեւանի Մէջ Յաղթեց Իրլանտային 1-0



Հայաստանի ֆուտբոլի հաւաքականը Ազգերու Լիգայի B ենթախումբի առաջին խմբակի առաջին հանգրուանին խաղացաւ Իրլանտայի հաւաքականի հետ: Վազգէն Սարգսեանի անուան Հանրապետական մարզադաշտին վրայ կայացած խաղի առաջին վայրկեաններուն նախաձեռնութիւնը ամբողջութեամբ Իրլանտայի ի նպաստ էր: Հայաստանի ընտրանին երբեմն-երբեմն հակայարձակուներու կը դիմէր:

Խաղի առաջին կէսը աւարտեցաւ 0-0 արդիւնքով: Երկրորդ խաղակէսի սկիզբին Հայաստանի հաւաքականը կրկին կը պաշտպանուէր յոյսը դնելով հակայարձակուներու վրայ: 74-րդ վայրկեանին հեռուէն ճշգրիտ հարուածով աչքի ինկաւ 21-ամեայ Էտուարտ Սպերցեանը:

Խոսակին Կապառոսի գլխաւորած խումբը կը փորձէր կրտկնպատկել իր առաւելութիւնը, սակայն չկարողացաւ հասնիլ յաջողութեան: Այսպիսով Հայաստան յաղթեց նուազագոյն արդիւնքով: Ազգերու Լիգայի A ենթախումբէն ներս Հայաստանի ազգային խումբը իր յաջորդ հանդիպումը կ'ունենայ Յունիսի 8-ին՝ հիւրընկալելով Սկոտլանդի հաւաքականին:

Նեյմարի Կողմ Յաղթանակ Ապահովեց Պրագիլին

Ֆուտբոլի Պրագիլի եւ ձաբոնի հաւաքականները ընկերական հանդիպում ունեցան Թոքիոյ մէջ: Նուազագոյն արդիւնքով առաւելութեան հասան պրագիլացիները: Միակ կողմ 77-րդ վայրկեանին 11 մեթրանոցէն նշանակեց Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի յարձակող Նեյմարը: Յունիսի 11-ին Պրագիլ ընկերական հանդիպում կ'ունենայ Ամերիկայի գաւաթակիր Արժանթինի հետ:

Կալեսի (Ուելս) Հաւաքականը 64 Տարուան Մէջ Առաջին Անգամ Հասաւ Աշխարհի Բաժակին

Ֆուտբոլի աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարի վերջին ուղեգիրը եւրոպական գօտիէն նուաճեց Ուելսի հաւաքականը: Ընտրական փուլի փլեյ-օֆֆի եզրափակիչին ուելսցիները Քարտիֆի մէջ ընդունեցին Ուքրանիոյ հաւաքականին եւ առաւելութեան հասան նուազագոյն արդիւնքով: Ուելսի հաւաքականը 64 տարուան մէջ առաջին անգամ կը մասնակցի աւարտական մրցաշարին:



B խումբին մէջ Ուելսի մրցակիցները կ'ըլլան Անգլիոյ, Իրանի եւ ԱՄՆ-ի հաւաքականները:

Մեսին Գերազանցեց Պուշկաշի Ցուցանիշը

Էսթոնիայի խումբին դէմ ընկերական խաղին 5 կոլ նշանակելով Արժանթինի հաւաքականի եւ ֆրանսական ՊՍԺ-ի յարձակող Լիոնել Մեսին ազգային խումբէն ներս իր կոլերու կոլերու քանակը հասցուցած է 86-ի եւ գերազանցած է Հունկարիայի հաւաքականի նախկին յարձակող Ֆերենց Պուշկաշի ցուցանիշը՝ 84 կոլ: Ազգային խումբերու լաւագոյն ումբարկուներու ցուցակին մէջ Մեսին բարձրացած է չորրորդ տեղը: Երրորդ տեղը Մալայզիայի հաւաքականի նախկին յարձակող Մոհամադ Տահարին է՝ 89 կոլ: Երկրորդը՝ Իրանի հաւաքականի նախկին խաղացող Ալի Տահին է՝ 109 կոլ: Ռեկորդակիրը Փորթուկալի հաւաքականի եւ անգլիական «Մանչեսթր Եունայթեդ» 37-ամեայ յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն է՝ 117 կոլ:

Ծանրամարտի Եւրոպայի Առաջնութեան Հայաստանի Հաւաքականը Նուաճեց 2 Ոսկէ, 3 Արծաթ Եւ 2 Պրոնզէ Մետալ



Ծանրամարտի Հայաստանի հաւաքականը 7 մետալով աւարտեց պայքարը Եւրոպայի առաջնութեան: Հայ ծանրորդները երկամարտին նուաճեցին 2 ոսկէ, 3 արծաթէ եւ 2 պրոնզէ մետալ:

Ոսկէ մետալակիրներ դարձան Ռաֆայէլ Յարութիւնեանը (81 քկ) եւ Դաւիթ Յովհաննիսեանը (96 քկ):

Ռաֆայէլ Յարութիւնեանը Եւրոպայի ախոյեան հռչակուեցաւ երկամարտի 354 քկ արդիւնքով (160+194): Դաւիթ Յովհաննիսեանը երկամարտի ընթացքին արձանագրեց 377 քկ արդիւնք (171+206):

Փոխ-ախոյեաններ դարձան Արա Աղանեանը (96 քկ), Սամուէլ Գասպարեանը (102 քկ) եւ Վարազդատ Լալայեանը (+109 քկ): Արա Աղանեանի երկամարտի արդիւնքը 375 քկ էր (170+205): Սամուէլ Գասպարեանը Եւրոպայի փոխ-ախոյեան դարձաւ երկամարտի 390 քկ արդիւնքով՝ 2 քկ ետ մնալով ախոյեանի կոչումը նուաճած պուլկարացի Դաւիթ Ֆիշերովէն:

+109 քկ ծանրութեան մէջ աշխարհի փոխ-ախոյեան Վարազդատ Լալայեանը երկամարտի 451 քկ (210+236) արդիւնքով հռչակուեցաւ փոխ-ախոյեան՝ 11 քկ-ով ետ մնալով 7-րդ անգամ Եւրոպայի ախոյեանի կոչումը նուաճած վրացի Լաշա Տալախաձէէն:

Պրոնզէ մետալակիրներ դարձան Արսէն Մարտիրոսեանը (109 քկ, երկամարտ 371 քկ), եւ Գոռ Մինասեանը (+109 քկ, երկամարտ 446 քկ): Արտաշէս Ներսիսեանի գլխաւորած կանանց հաւաքականէն Հայաստանի երեք ներկայացուցիչները՝ Հոփսիմէ Խուրշուդեանը, Իզապելա Եայեանը եւ Տաթև Յակոբեանը մետալներ չնուաճեցին:

Տար Ամենատղ Ֆութպոլիստներու Ցանկը

CIES Football Observatory հետազոտական կեդրոնը հրատարակած է աշխարհի ամենատղ արժող ֆուտբոլիստներու տասնեակը:

Most Valuable Players	
Ranked by estimated transfer values	
Kylian Mbappe	\$306m PSG
Vinicius Jr	\$275m Real Madrid
Erling Haaland	\$227m Man City
Pedri	\$201m Barcelona
Jude Bellingham	\$199m Dortmund
Phil Foden	\$184m Man City
Frenkie de Jong	\$167m Barcelona
Luis Diaz	\$164m Liverpool
Ruben Dias	\$163m Man City
Ferran Torres	\$163m Barcelona

Առաջատարը ֆրանսական ՊՍԺ-ի ֆրանսացի յարձակող Կիլիան Մապպէն է՝ 205,6 միլիոն եւրո: Երկրորդը՝ Երկամարտի մէջն են նաեւ Մարտիրոսի «Ռեալի» պրագիլացի յարձակող Վինիսիուս Ժունիորը (185,3 միլիոն եւրո) եւ անգլիական «Մանչեսթր Սիթի» նորուեկացի յարձակող Էրլինգ Հոլանդը (152,6 միլիոն եւրո):

Կիլիան Մապպէ, ՊՍԺ՝ 205,6 միլիոն եւրո
Վինիսիուս Ժունիոր, «Ռեալ»՝ 185,3 միլիոն եւրո
Էրլինգ Հոլանդ, «Մանչեսթր Սիթի»՝ 152,6 միլիոն եւրո
Պեդրի, «Պարսելոնա»՝ 135,1 միլիոն եւրո
Ջուդ Բելինգեմ, «Պորուսիա Տորթմունդ»՝ 133,7 միլիոն եւրո
Ֆիլ Ֆոտեն, «Մանչեսթր Սիթի»՝ 124 միլիոն եւրո
Ֆրենկ Դե Եոնկ, «Պարսելոնա»՝ 112,5 միլիոն եւրո
Լուիս Դիաս, «Լիվերպուլ»՝ 110 միլիոն եւրո
Ռուբեն Դիաս, «Մանչեսթր Սիթի»՝ 109,6 միլիոն եւրո
Ֆերան Տորես, «Բարսելոնա»՝ 109,5 միլիոն եւրո

Ազգերու Լիգա. Անգլիոյ Անսպասելի Պարտութիւնը

Ազգերու Լիգայի A Լիգայի երրորդ խումբի առաջին հանգրուանին անսպասելի պարտութիւն կրեց Անգլիոյ հաւաքականը: Հիւրընկալով Հունկարիոյ հաւաքականին Անգլիա դարտութիւն կրեց նուազագոյն արդիւնքով: Միակ կողմ 66-րդ վայրկեանին 11 մեթրանոցէն նշանակեց գերմանական «ՌԲ Լայպցիգի» կիսապաշտպան Տոմինիք Սոբոսլային:

ՄԱՅԱԶԴ



ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊՈՅԱՄԵԱՆ (Ապրիլ 10, 1923-Մայիս 22, 2022)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ Հայկանուշ Պոյամեանի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Մայիս 27, 2022ին: Յուղարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Յունիս 16, 2022, կ.ե. ժամը 1:00ին, Ս. Պետրոս Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys CA 91406, ապա թաղման կարգը Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles CA 90068:

- Սգակիրներ՝
Տէր եւ Տիկ. Ազատ եւ Սոնա Պոյամեան
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեան
Այրի Տիկ. Արտեմիա Մոմճեան եւ դուստրը Նայիրի
Այրի Տիկ. Աստղիկ Խաչատուրեան եւ դուստրը Ռիթա Օրդ. Քնարիկ Պոյամեան
Տէր եւ Տիկ. Գօգօ եւ Սիրվա Եսայեան եւ որդին Շանթ Տիար Անդրանիկ Խաչատուրեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Արմէն եւ Գարինա Պոյամեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Արա եւ Վերժինիա Պոյամեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Գարլո եւ Մարալ Հօնանեան եւ զաւակունք
Տիար Ռաֆֆի Պոյամեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Մարալ Սաղըճեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Շողեր Գրիգոր եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Լուսինէ Մոմճեան եւ զաւակունք
Տիար Սթիվ Չարըքեան
Տէր եւ Տիկ. Գօգօ եւ Սոնա Չարըքեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Վարուժ եւ Սիւզի Չարըքեան եւ զաւակունք
Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Նորա Հաւանճեան եւ զաւակունք
եւ համայն Պոյամեան, Մոմճեան, Խաչատուրեան, Եսայեան, Հօնանեան, Սաղըճեան, Գրիգոր, Չարըքեան, Հաւանճեան, Պոզեան, Մկրեան, Տազսեան, Սամուէլեան, Սեմերճեան, Քէշիշեան, Պալապանեան եւ Մղտեսեան:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳէՈՐԳ ԱՅՆԹԱՊԼԵԱՆԻ մահուան տիւրը առիթով Մարտիրոս Մուրատեան իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի 100 տոլար կը նուիրեն «Մասիս»-ի ֆոնտին:

Հայոց Ցեղասպանութեան Նահատակ Եկեղեցականներէն

Շարունակուած էջ 12-էն

ընթերցարան»: 1914-ին կ'ընտրուի Եոզկատի թեմին առաջնորդ եւ աշնան կը փութայ իր նոր պաշտօնատեղին, որ պիտի ըլլար վերջինը...: Թուրքիոյ լքուած եւ աննշան քաղաք ուղեւորութիւնը կ'ըլլայ չարչարալից նոր ուղի մը: Եոզկատի հայութիւնը մեծ խանդավառութեամբ կը դիմաւորէ նոր առաջնորդը, որուն մասին յուշագիրը կը գրէ. «Առաջնորդին ընդունելութիւնը էնվեր փաշայի գալուստէն ալ աւելի խանդավառութիւն ստեղծեց քաղաքին մէջ»: Հարիւրաւոր ձիւղերը կ'երթան դիմաւորելու Ներսէս Եպս.ը, ճամբու ամբողջ երկայնքին կարպետներ ու գորգեր կը փռուին: Եկեղեցիներուն զանգերը ժամեր շարունակ կը ղողանջեն: Ան մեծ համբաւ ունէր արդէն որպէս վարչագէտ, մտաւորական եւ յանդուգն առաջնորդ: Իր առաջնորդութեան կարճատեւ շրջանը կ'ըլլայ բեղուն. վերելք կ'ապրի կրթական կեանքը, կը հասնէր ժողովուրդի խոնարհ խաւին կարիքներուն:

1915-ի Հայոց Ցեղասպանութեան եաթաղանը, Եոզկատի եւ շրջակայից շուրջ 40 հազար հայութեան համար կ'ըլլայ ամենազարհուրելիներէն մէկը՝ իր վայրագութեամբ եւ զազանութեամբ: 20 Յուլիս 1915-ին Ներսէս Եպս. Եոզկատի երեւելի հայոց հետ կը ձերբակալուի եւ կը բանտարկուի: Այս կարաւանը իր 472 կարեւոր դէմքերով ճամբայ կը հանուի 26

Յուլիսին: Կարաւանը Սեբաստիա չհասած՝ Թաշլըտերէ վայրին մէջ կ'ենթարկուի կողոպուտի եւ ապա կոտորածի: Ըստ տեղեկութեանց առաջնորդ սրբազանը կը թալանուի եւ ապա կը խոշտանգուի արիւնարբու դահիճներու կողմէ: Նահատակներուն մարմինները կը նետուին գետի հոսանքին մէջ, որոնց մէջն էր անգուգական Սասկան վարդապետը...:

Ան հեղինակն է բազմաթիւ տպուած եւ անտիպ գործերու: Ձեռագիրներէն շատեր փճացան թրքական ոստիկանութեան կողմէ: Բանաստեղծութիւններ, արժէքաւոր քարոզներ, մտորումներ եւ ոգեշունչ գրութիւններ կը մնան մնայուն գանձեր հէք կրեւակահան ժառանգուած: Նշելի է յատկապէս «Կաթիլ Սը Զուր Այրած Սրտերուն» (1912, Կ. Պոլիս) գործը, որ 2010-ին վերահրատարակուեցաւ Հայկազի մէջ: Բաբգէն Ծ. Վրդ. Չարեան (այժմ՝ արքեպիսկոպոս) կը գրէ. «Ան եղած է գրիչի մարդ եւ հակառակ իր այս կեանքի տագնապալից վիճակին, երբեք գրիչը ձեռքէն չէ լքած» («Հայ Հոգեւորականութեան Կորուստը Մեծ Եղեռնին» Անթիլիաս, 2005, էջ 54):

Եզրակացնենք Թէոդիկի խօսքերով՝ «Սասկան վարդապետ. կեանքիդ բոլոր շրջաններուն մէջ շարձարանքը միայն ճանչցար, միշտ կալանակապ եւ արգելափակ, աչքերէդ ու գրիչէդ թափելով միշտ «Կաթիլ մը արցունք այրած սրտերու»»: Կեանք մը՝ որ նմանեցաւ անաւարտ Գողգոթայի:

Ձրոյց Էլիֆ Աբալայի եւ Բագրատ Էսդուգեանի Հետ

Շարունակուած էջ 11-էն

միջեւ Մնձուրի ուսեալ էր եւ Մարգար պապս ոչ: »Ես աւագն էի եւ հօրս օգնեցի հողագործութեամբ: Ինձմէ փոքրերը դպրոց յաճախեցին» կը պատմէր, անէծք տալով գրաճանաչ չըլլալուն:

Ի.Է.- Բացի կեանքի պայքարէն, մասնակցած էք նաեւ Թուրքիոյ մէջ ծախ քաղաքականութեան հոսանքին:

Բ.Է.- ձիւղ է ես աշխարհի անցուղարձները դիտեցի ձախակողմեան լուսամուտէ մը: Առաջին անգամ 15 տարեկան էի, երբ ծանօթացայ համայնավար գաղափարախօսութեան հետ եւ մինչեւ օրս ալ կը շարունակեմ այդ սկզբունքով ապրիլ ու գործել: Այս ընթացքը հակասական երեւոյթներու ալ

պատճառ դարձաւ: Օրինակի համար հաւատացեալ մը չեմ, բայց կը ծառայեմ Հայ Առաքելական եկեղեցւոյ: Համայնավար եւ նուիրեալ եկեղեցասէրի մը կերպարները կ'ընտանեմ իմ մէջ: Գիտեմ եկեղեցիի նշանակութիւնը հայ ազգի պատմութեան ընթացքին:

Ի.Է.- Ըստ ձեզ այս գիրքը պատմութեան վկայութիւն մը կարելի է համարել:

Բ.Է.- Կարծեմ թէ էլիֆ Աթալայի հեղինակութեամբ յաջող աշխատութիւն մը դուրս եկաւ: Հեզասահ պատում մը գոյացաւ: Պոլսահայեր բաւականին գուգահեռներ պիտի գտնեն իրենց ու այս գիրքի բովանդակութեան միջեւ: Իսկ ոչ հայեր եւս պիտի տպաւորուին անկաշկանդ ոճէն: «ԱԿՕՍ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:-----
Email:-----

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Հովանավորությամբ՝

Ս. Դ. Հ. Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան
135-Ամյակի Նուիրում

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱԳԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

ARMENIAN NATIONAL & ETHNOGRAPHIC SONGS

Sponsored by: S. D. H. P. Western American Committee

Dedicated to 135th Anniversary

With the participation of:

Մասնակցությամբ՝



ԱՌՆՈ ՄԿՐՏՉԵԱՆ
ARNO MKRTCHYAN



ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈՒՅԱՆ
HARUT HAGOPYAN

The event will take place on
Saturday, June 25, 2022,
Starting from 7:00 p.m.
At AEBU Center

Տեղի կ'ունենայ Շարաթ Յունիս 25, 2022-ին
Երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ
Հ.Կ.Բ.Մ.-Ի շքեղ սրահէն ներս՝
1060 N. ALLEN AVE., PASADENA, CA 91104
Տեղերը ապահովելու համար՝ Հեռ. 626-429-2815
Մուտքի նուէր՝ \$75